24563

Գրքատարներ բարբ տերկրների միացեալ

ՉԵԿԻՆ
(Ֆառոցկի)

ԱԿՆԱՐԿՆԵՐ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թարգ.
Ա.ՐՇ. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

331.88
Ջ-35

ՅԵՐԵՎԱՆ
1925

№ 15
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

16 JUL 2013

ՀԱՄԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. ԼԱԶՈՎՍԿԻ.—«Հոսանքների պայքարը համաշխարհային արհշարժման մեջ»—(սպառված)
2. » «Արհմիությունների խնդիրներն ու գործելակերպը» (սպառված).
3. ԵՅԴՈՒՍ.—«Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին (սպառված)
4. ԱՐԿ. ԱՆ. «Բանվորական շարժման պատմությունը Անգլիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում (մնացել են սակավաթիվ օրինակներ) . . . . . գինն է 75 կ.
5. — «Գործարկոմների և տեղկոմների ուղղեցույց» . . . . . » 1 ռ.
6. — «Աշխատանքի Որեհապիրք» . . . . » — 15 կ.
7. ԱՆՏՈՇԿԻՆ. «Պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում» . . . . . » — 60 կ.
8. ՍԵՆՅՈՒՇԿԻՆ.—Գործարկոմների և տեղկոմների անելիքները ներկա պայմաններում» . . . . . » — 25 կ.
9. ԳՈՒՐԵՎԻՉ.—«Լենինը և արհեստակցական միությունները» . . . . . » 50 կ.
10. ԲԻԹՈՎՍԿԻ. «Բանվորների և ծառայողների ապահովագրումը հաշմանդամության դեպքում» (սպառված) . . » — 20 կ.
11. ՖԱՔԲՐԻԿԱՆՏ. «Սոցիալական ապահովագրությունը» (սպառված) . . . . » — 20 կ.
12. ՏԵՏԵՐԻՆ.—«Ի՞նչ և արհմիության կանոնադրությունը» . . . . . » — 25 կ.
13. ՍՊԵՐԱՆՍԿԻ.—«Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մայր» . . . . . » — 20 կ.
14. — «Կանոնադրություն բանվորական գրադարանի . . . . . » — 15 կ.
15. ՉԵԿԻՆ.—«Ակնարկներ բանվորական շարժման պատմությունից

15 JAN 2010

UV

331.88
Ջ-35

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք։

300
2551-Ջ

Ա. ՉԵԿԻՆ-ՅԱՐՈՑԿԻ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1003
1926թ.

ԹԱՐԳՄ. Ա. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

10356

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 15

ՅԵՐԵՎԱՆ 1925

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ԱԳՈՒ ԳԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ.

ՀՐԵՎՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրաշար. 44 բ. Պատ. 3479 Տիրաժ 5000

1. ՄԵՐ ՈՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Դասակարգային պայքարի պատմությունը փաստորեն համընկնում է հասարակության դասակարգային բաժանման պատմությանը։ Բանի վոր գոյություն ունեն հակադիր տնտեսական շահեր. ունեցող խմբերն ու դասակարգերը, գոյություն կունենա և նրանց պայքարն իրար դեմ։ Դեռ ևս հին Յեգիպտոսում ազգաբնակության տարբեր խմբերի տնտեսական դրության տարբերություններ կային։ Այդ յերկրում գոյություն ունեցող հասարակակարգը ստրուկների աշխատանքի վրա յեր հիմնված։ Այս պատճառով, նույն իսկ Յեգիպտոսում, պատմությունն արձանագրում է ճնշվածների յեվ շահագործվողների շարժման գոյությունն՝ ընդդեմ ճնշողների յեվ շահագործողների։ Միջին դարերին ծանոթ եր գյուղացիների և կալվածատերերի, բուրժուազիայի և կալվածատերերի, քաղաքի և գյուղի պայքարը։ Մեր որերում դասակարգային պայքարը ժղվում է յերկու հիմնական դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։

Անցյալների դասակարգային պայքարը վորոշ տեսակետներից նույն իսկ մեր որերի դասակարգային պայքարի այս կամ այն փասսն ու դրվագն է հիշեցնում։ Այսպես, որինակ, յեգիպտական տաճարների կառուցման վրա աշխատող հրեա-ստրուկների ապստամբությունը, վոր տեղի յե ունեցել Քրիստոսի ծննդից ավելի քան հազար տարի առաջ, ծագել է նույն առիթով, ինչ առիթով անգլիական մանուֆակտուրական արդյունաբերության մեջ բանվորները հաճախ ստիպված են լինում մեր որերում գործադուլ հայտարարել։ Աստվածաշնչի առասպելից մեզ հայտնի յե, վոր հրեա-ստրուկներին հարկադրում էին ադյուսկ կավ առանց հարդ խառնելու պատրաստել, — և նրանք դադա-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ԱԳՈՒ ՍՍՀ
Ս. ԱՎ. Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ

ՀՐԵՑՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ. 44 թ. Պատ. 3479 Տիրաժ 5000

1. ՄԵՐ ՈՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Դասակարգային պայքարի պատմությունը փաստորեն համընկնում է հասարակության դասակարգային բաժանման պատմությանը։ Քանի վոր գոյություն ունեն հակադիր տնտեսական շահեր. ունեցող խմբերն ու դասակարգերը, գոյություն կունենա և նրանց պայքարն իրար դեմ։ Դեռ ևս հին Եգիպտոսում ազգաբնակության տարբեր խմբերի տնտեսական դրության տարբերություններ կային։ Այդ ժերկրում գոյություն ունեցող հասարակակարգը սարուկների աշխատանքի վրա յեր հիմնված։ Այս պատճառով, նույն իսկ Եգիպտոսում, պատմությունն արձանագրում է ճնշվածների յեվ շահագործվողների շարժման գոյությունն՝ ընդդեմ ճնշողների յեվ շահագործողների։ Միջին դարերին ծանոթ եր գյուղացիների և կալվածատերերի, բուրժուազիայի և կալվածատերերի, քաղաքի և գյուղի պայքարը։ Մեր որերում դասակարգային պայքարը ժդվում է յերկու հիմնական դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև։

Անցյալների դասակարգային պայքարը վորոշ տեսակետներից նույն իսկ մեր որերի դասակարգային պայքարի այս կամ այն փաստն ու դրվագն է հիշեցնում։ Այսպես, որինակ, յեգիպտական տաճարների կառուցման վրա աշխատող հրեա-սարուկների ապստամբությունը, վոր տեղի յե ունեցել Քրիստոսի ծննդից ավելի քան հազար տարի առաջ, ծագել է նույն առիթով, ինչ առիթով անգլիական մանուֆակտուրական արդյունաբերության մեջ բանվորները հաճախ ստիպված են լինում մեր որերում գործադուլ հայտարարել։ Աստվածաշնչի առասպելից մեզ հայտնի յե, վոր հրեա-սարուկներին հարկադրում եյին ազյուսակ կամ առանց հարդ խառնելու պատրաստել,—և նրանք դադա-

բեցնում են իրենց աշխատանքները։ Ճիշտ նույն կերպ են վարվում նաև Լանկաշիրի շրջանի մանուֆակտուրական բանվորները, յերբ նրանց վատ հատկություն ունեցող հումք նյութ են տալիս մանելու։ Այսպիսով անցյալի դասակարգային պայքարը յերբեմն նույն իսկ իր ձևերով այժմյան դասակարգային պայքարն է հիշեցնում։

Բայց, չնայած այն բանին, որ պատմության տարբեր ասպիճաններում հաճախ դասակարգային պայքարի առանձին դրվագների և փաստերի մեծ նմանության ենք հանդիպում, —այնուամենայնիվ կապիտալիզմի ծագումից առաջ գոյություն ունեցող շարժումները և կապիտալիստական հասարակության պայմաններում ծնված պայքարն, այսինքն բանվորական շարժումը՝ բոլորովին տարբեր բաներ են։ Սարուկների ապստամբությունը հին Հռոմում Սպարտակի ղեկավարությամբ, կամ ստրուկ հրեաների վերոհիշյալ ապստամբությունն ավելի հին Յեգիպտոսում, ուրիշ բան չեյին, յեթե ոչ ապստամբություններ, այսինքն անտանելի ճնշման դեմ բարձրացած զայրույթի պոռթկումներ։ Մարդկային հասարակության շահագործվող, ճնշված «ստորին» խավերի շարժումն առաջներում շահագործվող դասակարգի ուժերի կազմակերպման ձև չեր ընդունում։ Սարուկների ազատագրումով՝ ստրուկների դիկտատուրա չեր ստեղծվում։ Դրանով միայն հավասարվում եր ստրուկի և նրա նախկին տիրոջ դրությունը։ Հռոմի «ազատ արձակված» ստրուկներից առևտրականներ ու արդյունաբերողներ եյին դուրս գալիս և միջին դարերում նախկին ճորտերից՝ արհեստավորներ ու մանուֆակտուրայագործներ։

Այս վերջիններիս և քաղաքների վաճառականների, քաղաքի տնտեսական ամրապնդման ընթացքում, ձևավորվեցին և բուրժուական հատուկ դասակարգն ստեղծեցին։ Տնտեսական և քաղաքական գերիշխանության ձգտող այս նոր դասակարգը՝ բուրժուազիան, հեղափոխություններ

եր կատարում, բուրժուական հեղափոխություններ, որոնք ֆեոդալիզմը կապիտալիզմով եյին փոխարինում։

Միջին դարերում և նոր դարերի արշալույսին տեղի յեն ունենում մի շարք տարերային և կատաղի գյուղացիական ապստամբություններ։ Յերբեմն այդ ապստամբությունները տևում եյին մի քանի տարի և ընդգրկում եյին գյուղացիների հսկայական մասսաներ։ Սակայն դրանք բոլորն էլ անհաջող վախճան եյին ունենում։ Տնտեսապես փոշիացած գյուղացիությունը, բավականաչափ համախմբված ու կազմակերպված չլինելով, ֆեոդալ-կալվածատերերի հետ պայքարելիս՝ միշտ պարտություն եր կրում։ Այսպիսով գյուղացիությունը սեփական ուժերով չկարողացավ լուծել իր ազատագրության հարցը։ Միանգամայն այլ է պրոլետարիատի դասակարգային պայքարը։

Այդ պայքարի ընթացքում բանվորներն իրենց արհեստակցական, քաղաքական, կոոպերատիվ և կուլտուրա-կրթական կազմակերպություններն են ստեղծում. այս կազմակերպությունները կոչված եյին ծառայելու բանվորական մասսայի շահերին և կապիտալիզմի լծից ազատագրվելու համար բանվորների մղած պայքարին։ Յեվ այդ կազմակերպություններն ստեղծելով ու դրանց շուրջը համախմբվելով, բանվորները դառնում են այն դասակարգը, որն իր կանոնավոր պատերազմն է մղում իր դասակարգային հակառակորդների դեմ, բուրժուական դիկտատուրայի վերջնական խորտակման ձգտելով։

Բայց ինչն է ներկայիս դասակարգային պայքարի այս հիմնական առանձնահատկության պատճառը։

Այդ հարցի պատասխանը տալիս է մեզ այն դերը, որ կատարում է պրոլետարիատը ներկայիս դասակարգային պայքարի մեջ։ Իսկ այդ դերն էլ իր հերթին նրան թելադրել է այն դրությունը, որի մեջ գտնվում է բանվոր դասակարգը կապիտալիզմի տիրապետության ժամանակ։

2. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Կապիտալիստորեն կազմակերպված տնտեսության մեջ բանվորի դրության հիմնական առանձնահատկությունն այն է, որ նա ամբողջապես կախված է իր բանվորական ուժի վաճառումից։ Կապիտալիստական կարգերում բանվորի յեկամտի աղբյուրը հենց այդ բանվորական ուժի վաճառքն է հատուկ շուկայում, որ աշխատանքի շուկա անունն է կրում։

Իր բանվորական ուժը տալով, բանվորն աշխատավարձ է ստանում։ Ուրիշ խոսքով ասած՝ նա վոչ թե իր արտադրածի վաճառքի գինն, այլ իր սեփական բանվորական ուժի գինն է ստանում։ Բանվորի և արհեստավորի կամ տնայնագործի միջև յեղած տարբերությունն ել հենց այն է, որ մինչդեռ բանվորի իր բանվորական ուժն է վաճառում, արհեստավորն ու տնայնագործն, ընդհակառակն, իրենց աշխատանքն այս կամ այն ապրանքի արտադրման վրա գործադրելով, այդ արտադրած ապրանքն են շուկա հանում ու վաճառում։ Նույն տարբերությունը գոյություն ունի նաև բանվորի և գյուղացու միջև, քանի որ վերջինս ել իր ապրուստի միջոցները կամ անմիջականապես իր ուժը գործադրելուց է ստանում (հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ), կամ իր ստացած բերքի մի մասը վաճառելուց։

Այսպիսով ներկայիս բանվորը վոչ թե ինքնուրույն արտադրող է, այլ այդ արտադրության միջոցներից մեկն է միայն։ Նրա ուժը ճիշտ այնպես է վաճառվում, ինչպես և արտադրության այս կամ այն միջոցը, և նրա ուժի գինը սահմանողն՝ աշխատանքի շուկայում գոյություն ունեցող պահանջի և առաջարկի փոխ-հարաբերությունն է։

Ժողովրդական տնտեսության կապիտալիստական կազմակերպության շրջանում բանվորական ուժի այս բնույթը (ապրանք լինելը)—բանվորին վարձելը յեկամուտի աղբյուր է դարձնում կապիտալիստի համար, վորը հավելյալ արժեք է ստանում շահագործված աշխատանքից։

Այսպիսով մեր որերի դասակարգային հակասությունների պատճառն այն է, որ կապիտալիստներն արտադրության միջոցներն իրենց ձեռքին ունենալով և բանվորների աշխատանքի ոգտագործումից ստացվող հավելյալ արժեքը կուտակելով, բանվորների աշխատանքի արդյունքի մի մասը խլում են նրանցից։ Յեվ բանվորներն, ամբողջապես կախված լինելով այն գնից, որ ունի իրենց ուժն աշխատանքի շուկայում, պարզ կերպով տեսնում են, որ իրենց շահերը և իրենց բանվորական ուժը գնող կապիտալիստի շահերը՝ տարբեր են։

Յեվ վորովհետև այս դրությունն արտադրության գործիքների մասնավոր սեփականություն լինելու հետևանք է, ուստի և կապիտալիստական հասարակակարգի այս յերկու հիմնական դասակարգերի միջև տեղի ունեցող ընդհարումները կամաց-կամաց այնպիսի դրության են հասցնում, որ այդ դասակարգերից մեկն սկսում է պաշտպանել արտադրության գործիքներին տիրելու իր իրավունքն, իսկ մյուսն սկսում է պայքարել այդ իրավունքը վերացնելու համար։

Այս ընդհարման ժամանակ բուրժուազիան պաշտպանվում է իր տրամադրության տակ գտնված բոլոր միջոցներով՝ բանվորների վրա տնտեսական ճնշում գործադրելով, կապիտալիստական հարաբերությունների բնույթն ըմբռնելու հնարավորությունից բանվորներին զրկելու միջոցով, պետական ապպարատի ոգնությանը դիմելով։ Ցածր աշխատավարձը, բանվորական որվա խիստ յերկար լինելը, մանկահասակներին սովորելու հնարավորությունից զրկելը, աշակերտներին բուրժուազիայի տեսակետը պատվաստող դպրոցը, հարստության դեմ խոնարհվելու և ծանր դրության հետ հաշտվելու քարոզ կարդացող կրոնը, հատուկ յեռանդով բանվորներին հա-

լածող դասարանը, կապիտալիստների սեփականությունը պաշտպանող բանակը — այս ամենը ծառայում է բուրժուազիայի դիկտատուրային։ Իսկ այդ դիկտատուրան հնարավորություն է տալիս կապիտալիստներին, որ ապահով կերպով ու ազատորեն ոգտագործեն իրենց սեփականատիրական իրավունքն՝ արտադրության գործիքների նկատմամբ, այսինքն ոգտագործեն աշխատանքը շա՞տագործելու իրավունքը։

Արտադրության միջոցների մասնավոր սեփականություն կազմելու դեմ պայքարելիս, բանվոր դասակարգն էլ, իր հերթին, ոգտագործում է իր արտադրության տակ յեղած բոլոր միջոցները։ Բանվոր դասակարգը տընտեսական ճնշման միջոցին էլ է դիմում։ Նա իր դրության բարելավման է ձգտում գործադուլային պայքար մղելով, այսինքն իր սեփական կազմակերպությունների արհեստակցական միությունների՝ միջոցով անհատ կապիտալիստների կամ կապիտալիստների կազմակերպությունների վրա ճնշում գործ դնելով։ Նա ճնշում է գործ դնում նաև կապիտալիստական պետության վրա, ստեղծելով իր դասակարգային կուսակցությունը, որը պայքարում է հանուն բանվորների շահերի, քաղաքական ճնշում գործադրելով և պրոլետարիատի ողջ դասակարգային պայքարը ղեկավարելով։ Նա ամրացնում է իր դրությունն՝ իր ապրուստի միջոցների ավելացման ձգտելով, և իր սպառման առարկաներն եժանացրած գներով կոոպերատիվ ճանապարհով է գնում։ Վերջապես նա բուրժուական դատարակությանը հակադրում է իր դասակարգային դատարակությունը, բանվորական մամուլ և բանվորական ակումբ ստեղծելով։

Ուրիշ խոսքով ասած՝ դասակարգային պայքարի արդյունքն այն է լինում, որ ծայր է առնում ու ամրանում է բանվորական շարժումը։

Վերոհիշյալ այն ամենը, որ բանվոր դասակարգը հակադրում է բուրժուազիային դասակարգերի ընդհարման ժամանակ՝ վոչ այլ ինչ են, յեթե վոչ բանվորական շարժման տարբեր արտահայտություններ, իսկ այդ շարժման վերջնական նպատակն, ինչպես ասացինք, արտադրության գործիքների սեփականատիրական իրավունքի վերացնելն է։

Բայց նախ քան բանվորական շարժումը կդա այն յեզրակացության, որ բանվոր դասակարգը կապիտալիզմի լծից ազատող պրոլետարական դիկտատուրայի վերջնական հաղթանակի համար պետք է պայքարել — նա զարգացման յերկարատև պրոցես է ապրում։

Բանվորական շարժումն սկիզբ է առել դեռ ևս 17-րդ դարի կիսերին. դրանից համարյա թե մի դար հետո յեր, որ Արկրայտը, Խարգրիվսը, Կարտրայտը և Ուատտը Անգլիայում հնարեցին մեխանիքական մանող և հյուսող ստանոկներն ու շոգեմեքենան, իսկ Ժակկարը Ֆրանսիայում նույնպես հնարեց մեխանիքական մանող ստանոկ, որոնք տնտեսության կապիտալիստական կազմակերպության համար լայն ճանապարհ բացին։ 20-րդ դարի յերկրորդ տասնամյակի վերջերին եր միայն, որ բանվոր դասակարգի համար բուրժուազիայի իշխանությունը տապալելու հնարավորություն ստեղծվեց, այն էլ առայժմ միայն Ռուսաստանում։ Այսպիսով ավելի քան հարյուր հիսուն տարի՝ բանվորական շարժման զարգացումն եր կատարվում։ Ըստ ինքյան հասկանալի յե, որ այս յերկարատև ժամանակի ընթացքում բանվորական շարժումը շատ փուլեր է անցել, որ նրա զարգացման ուղին բազմաթիվ ետապներ է ունեցել։

Այս պատճառով՝ պրոլետարիատի պատմական դերն ըմբռնելու համար, անհրաժեշտ է ծանոթանալ բանվորական շարժման այս ճանապարհի հետ, անհրաժեշտ է ծանոթանալ այն ետապների հետ, որ դասակարգային պայքարն է ունեցել իր զարգացման ընթացքում։

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Բանվորական շարժումն իր հարյուրհիսունամյա զարգացման ընթացքում մի շարք ետապներ է անցել։ Այդ շարժման ճանապարհին առաջին նշանախեցը դրեց բանվոր դասակարգի ծնունդ առնելը։ Ցեթե կուզեք, բանվոր դասակարգը մեկ անգամից այնպես կազմ ու պատրաստ լույս աշխարհ չեկավ, ինչպիսին է նա ներկայումս, յերբ կապիտալիզմի տապալմանը և իր վերջնական հաղթանակին է մոտենում։ Բանվոր դասակարգի կառուցվածքն անգամ ձևափոխվում եր կապիտալիզմի զարգացման ընթացքում և արտացոլվում եր դասակարգային պայքարի մեջ։ Այս իսկ պատճառով, բանվորական շարժման պատմության սկզբան մոմենտները միևնույն ժամանակ բանվոր դասակարգի ոկզբնավորման մոմենտներն են։

Բանվորական շարժման զարգացման յերկրորդ ետապը բանվոր դասակարգն անցավ այն ժամանակ, յերբ հարկադրվեց 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի արդյունաբերական հեղաշրջման գեմ դուրս գալ։ Ցեվ բանվորական շարժման այս ետապի սկզբան նշանը՝ բանվորների պայքարն եր մեքենայի դեմ։

Յերրորդ ետապը բանվոր դասակարգի համար սկսվեց այն ժամենտից, յերբ ծնունդ առավ ուտոպիստական սոցիալիզմը, վորի հետևողները հավատում եյին, թե անմիջապես «արդար կարգեր» են գալու։ Այս ետապում բանվորական շարժումը հեղափոխական խմորման վերելք է ապրում և պատմության մեջ ել հայտնի յե, վորպես հեղափոխականության շրջան։

Սրան հետևեց ուժերի կուտակման և կապիտալին առաջին վճռական ճակատամարտը տալու նախապատրաստման շրջանը։

Այս շրջանը վերջացավ Փարիզի Կոմունայով, վորը

միևնույն ժամանակ, բանվորական-շարժման պատմական ճանապարհի նոր ետապներից մեկն է։

Վերջապես գալիս է նոր ճակատամարտների համար ուժեր կուտակելու նոր շրջանը, վորն այս անգամ արդեն հեղափոխական պրոլետարիատի հոկտեմբերյան հաղթանակին հասցրեց։

Սրանք են բանվորական շարժման պատմության հիմնական մոմենտները, սրանք են նրա գլխավոր ետապները։ Սրանց հետ է, վոր մենք պետք է ծանոթանանք։

4. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ

Ինքնին հասկանալի յե, վոր բանվոր դասակարգը մեկ անգամից չե աշխարհ յեկել։ Փաստորեն մինչև 17-րդ դարի կիսերը վոչ մի տեղ այնպիսի դրություն չկար, վոր արդյունագործությունը վարեու բանվորների աշխատանքի դիմեր։ Պարենավորման մթերքները ստացվում եյին գյուղացիության աշխատանքով. հացահատիկների և գյուղատնտեսական այլ մթերքների մի վորոշ մասը պահելով վորպես սերմացու և վորպես իր ընտանիքում սպառելու նյութ, մնացած մասով գյուղացիությունն իր հարկերն ու այլ տուրքերն եր վճարում կալվածատիրոջն ու պետությանն, իսկ ավելյուկը վաճառում եր շուկայում։ Բոլոր մյուս անհրաժեշտ ապրանքները քաղաքներում արհեստավորներն եյին արտադրում, վորոնք արդյունագործության ամեն մի ճյուղի համար հատուկ համքյարություն եյին կազմել (դերձակների համքյարություն, գլխարկ կարողների համքյարություն, վոսկերիչների, կոշկակարների, զինագործների համքյարություններ և այլն), իսկ գյուղերում՝ իրենք գյուղացիները եյին պատրաստում. սրանք հագնում եյին իրենց տանը գործած կտոր, տանը պատրաստած վոտնաման, բանեցնում եյին տնայնագործական միջոցներով շինված կարասիք,

ամանեղեն ու թեթև գործիքներ և այլն։ Մինչդեռ արհեստավորը շուկայի համար եր աշխատում և գլխավորապես հատուկ պատվերով, տնայնագործն, ընդհակառակն, իրեն և իր ընտանիքի պահանջներն եր նկատի ունենում։

Հասկանալի է, որ համքյարական կարգերում բոլորը ձեռնարկատերեր չեյին։ Ձեռնարկի տերը վարպետն եր, իսկ համքյարության բոլոր մյուս աշխատավորները վարպետացուներ (подмастерье) կամ աշակերտներ եյին։ Սակայն վարպետի ու վարպետացուի, կամ վարպետացուի ու աշակերտի միջև յեղած տարբերությունը՝ մեծ չեր։ Յուրաքանչյուր աշակերտ, որոշ ժամանակ իբրև այդպիսին աշխատելուց հետո, դառնում եր վարպետացու, այսինքն փոքր ի շատե փորձված աշխատող։ Յուրաքանչյուր վարպետացու, վարպետի կոչում ստանալու համար սահմանված քննությունը տալուց հետո, կարող եր իր ժառանգիությանը համապատասխանող ձեռնարկի տեր դառնալ։ Դրա համար հատուկ կապիտալ չեր պահանջվում, որովհետև ամբողջ աշխատանքը ձեռքով եր կատարվում, ամենապարզ տիպի գործիքներով։ Այս պատճառով, ժամանակի ընթացքում յուրաքանչյուր աշակերտ դառնում եր վարպետացու և յուրաքանչյուր վարպետացու՝ ձեռնարկատեր-վարպետ, որի մոտ իրենց հերթին աշակերտներ եյին սովորում և ոժանդակ ձեռքեր աշխատում։

Բայց 17-րդ դարի վերջից սկսած Անգլիայի, այսինքն կապիտալիստական տնտեսության ճանապարհ բռնած առաջին յերկրի, արհեստային համքյարական կարգերի անկումն է սկսվում։ Առանձին ձեռնարկներն սկսում են գերաճել։ Սրա պատճառն այն եր, որ ապրանքների սպառման շուկան բնդարձակվում էր։ Ձեռնարկատեր վարպետներին դենք, հագուստ, փոխանման և այլն պատվիրող մեծաունիները (знать) պատերազմների և ավարի միջոցով հարստանում եյին։

Մենք գիտենք, որ այդ ժամանակ ծովահենությունն արդեն որինականացված եր Անգլիայում Յեղիսաբեթ թագուհու կողմից, և ծովային ավազակության այնպիսի հերոսներ, ինչպիսին Դրեյկն եր, զգալի կերպով «թեթևացնում» եյին Ամերիկայից վոսկի բերող իսպանական նավերի բեռը։ Բացի այդ, 16-րդ դարից սկսած, Անգլիայի կալվածատերերը բրդի մեծ առևտուր սկսեցին Ֆլանդրիայի հետ (Ֆլանդրիան Բելգիայի ծովափնյա շրջաններից մեկն է) և առևտուրից նրանք ավելի մեծ դրամական յեկամուտ եյին ստանում, քան գյուղացիների տված բահրան եր (оброк)։ Այսպիսով, այն մարդկանց գնողունակությունը (покупательная способность), որոնք իրենց անհրաժեշտ ապրանքն եյին պատվիրում ձեռնարկատեր վարպետին (цеховой мастер), աճում եր։ Իսկ սա նշանակում եր, որ համքյարությունը պետք է ավելի մեծ կապիտալ ունենար. ձեռնարկատերն իր ձեռքի տակ պետք է ունենար թե ավելի մեծ քանակությամբ հում նյութ և թե ավելի բազմազան նյութեղեն։ Բացի այդ, աշխատանքի պահանջը սեզոնային եր. որինակ, դերձակների համքյարությունն ամենից շատ և ամենից լավ աշխատում եր տարին յերկու անգամ, ամեն անգամ մի յերկու ամիս, իսկ մնացած ժամանակը՝ համարյա թե պարապ եր լինում։ Այս պատճառով դերձականոցի տերը մեկ կողմից լրացուցիչ կապիտալի կարիք եր զգում, որպեսզի կարողանա անցկացնել լճացման շրջանը և միևնույն ժամանակ պատրաստի նյութեղեն ու հագուստեղեն եր կուտակում (այստեղից են սկիզբն առնում պատրաստի հագուստեղենի արհեստանոց-խանութները), — իսկ մյուս կողմից աշխատանքի յեռուն շրջանում լրացուցիչ բանվորական ձեռքերի կարիք եր զգում։

Այս բոլորը մեծ շփոթ եր մտցնում արհեստային

համքյարական կարգերի մեջ։ Համքյարական ձեռնարկները սկսում նախ սկսում է յերևան գալ ոժանդակ ձեռքերի, այսինքն այնպիսի բանվորների աշխատանքը, վորոնք աշակերտություն չեյին անում, վորոնց թիվը համքյարական կանոններով սահմանափակված չեր (ինչպես այդ բանն արված եր աշակերտների և վարպետացուների նկատմամբ) և վորոնք աշխատավարձով եյին բանում։ Ոժանդակ ձեռքերն աշակերտություն չեյին անում և վոչ էլ ունեյին այն դիրքը, վոր վարպետացուներն եյին դրավել համքյարության մեջ։ Վարպետացուները գործատիրոջ ընտանիքի անդամ եյին համարվում. տանտիկինը նրանց համար նույն ճաշն եր պատրաստում, ինչ և վարպետի վողջ ընտանիքի համար. վարպետի աղջիկը հաճախ այս կամ այն վարպետացուի հետ եր ամուսնանում։ Մինչդեռ ոժանդակ ձեռքերը վարձու բանվորների հարաբերություն եյին պահպանում գործատեր վարպետի հետ, հաճախ կարճ ժամանակով եյին վարձվում և վարձման ժամանակը լրանալուց հետո՝ իրենց տունն եյին դառնում և այլն։

Յերևան է գալիս վարձու աշխատանքը և համքյարության կյանքի մեջ դասակարգային հակասություններ մտցնում։ Ընդարձակվում է շուկան, աճում են համքյարական ձեռնարկները, աստիճանաբար աճում է նաև ոժանդակ ձեռքերի թիվը, վոր սկզբում աննշան եր, և համքյարության մյուս աշխատավորներից անջատ խմբակ է ստեղծվում։ Իսկ յերբ համքյարական ձեռնարկներն աճեցին համքյարական որգանիզմի մեջ և առևտրական կապիտալն ամենուրեք իր բունը դրեց—վարպետացուների համար ինքնուրույն գործատեր դառնալու հնարավորությունը սահմանափակվեց։ Վարպետի կոչումն այլևս ինքնուրույն գործի տեր դառնալու հնարավորություն չեր տալիս նրան, ինչպես առաջ եր... Այս է պատճառը, վոր 18-րդ դարի սկզբին վարպետացուների մեջ սկսում են

բողոքի ձայներ լսվել այն մասին, վոր համքյարական վարպետն «իր խանութն» ունեցող «դուքանչի» յե դառնում... Բայց բողոքները չեյին ոգնում. կապիտալը բայբայում եր համքյարական կարգերը և համքյարական ձեռնարկների վարձու աշխատավորների խմբակի թվին ավելացնում եյին պրոլետարականացող վարպետացուներ։

Այսպիսով, նույն իսկ համքյարական կարգերի ներսում, վարձու բանվորների դասակարգ եր ստեղծվում։ Այդ դասակարգն ստեղծվելու հետ միասին նրա մեջ աստիճանաբար սկսեց ծայր առնել նոր բանվորների շահերն իրենց տերերի սանձարձակությունից պաշտպանելու կողմն ուղղված շարժումը։ Կապիտալիզմի ուղին առաջինն Անգլիան բռնեց, բայց իրերի այս դրությունը միայն Անգլիայում չե, վոր գոյություն ուներ։ Ֆրանսիական Հեղափոխության նախորյակին այդպիսի դրություն եր տիրում Ֆրանսիայում, իսկ 40-ական թվականներից սկսած՝ նաև Գերմանիայում։

5. ՀՈՂԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սակայն արհեստային կարգերի անկումն առևտրական կապիտալի ազդեցությամբ՝ բանվոր դասակարգի ստեղծվելու պայմաններից մեկն եր միայն։ Յերկրորդ պայմանը գյուղացիական մանր տնտեսության բայբայումն եր, հողային հեղափոխությունը, վոր տեղի ունեցավ Անգլիայում դեռ ևս 16-րդ դարում և վորի արդյունքները լիովին յերևան յեկան գլխավորապես 18-րդ դարի յերկրորդ և 19-րդ դարի առաջին կիսերին։ Հողային հեղափոխությունից առաջ Անգլիայում տիրող հողային կարգը կալվածատիրությունն ու գյուղացիական մանր հողատիրությունն եր։ Կալվածատերը, կամ ինչպես Անգլիայում եյին ասում, մանորի տերը, ցմահ կապալով եր տալիս այս կամ այն փոքրիկ հողամասը գյուղացիներին. իսկ կապալառուի ժառանգները կարող եյին նրա մահվանից

հետո դարձյալ իրենց ձեռքին պահել կապալով վերցրած հողամասը։ Այսպիսով գյուղացիք հողն ոգտագործում էին սերնդից-սերունդ։ Բացի այդ նրանք համայնական արոտատեղերից և համայնական անտառից ոգտվելու իրավունք էլ էին ստանում։

Քանի կապալավարձը (հաճախ բերքից ստացվող տասանորդը և այլն) բավարարում էր կալվածատիրոջն—այս կարգը պահպանվում էր։ Բայց 16-րդ դարի կիսերից բոկած կալվածատիրոջ համար ավելի ձեռնտու էր հողատասերը վոչ թե գյուղացիներին տալ, այլ սեփական միջոցներով ոգտագործել։ Վորովհետև այդ միջոցին բուրդ մշակող ֆլամանդական արդյունագործությունն սկսել զարգանալ, մեծացրեց բրդի պահանջը և նրա դինն էլ կու անգամով բարձրացավ, կալվածատերերն ամենուրեք սկսեցին վոչխարաբուծության անցնել, իսկ դրա համար պետք էին հողի մեծ տարածություններ։ Վորպեսզի հողի այդպիսի մեծ տարածություն իրենց ձեռքը դձեն, մանորատերերը (կալվածատերերը) սկսեցին «ցանկապատել համայնական հողերն», այսինքը կապալառուներին զրկել համայնական արոտատեղերից և նույն իսկ վարելահողերից ոգտվելու իրավունքից։ «Ցանկապատելու» պրոցեսը մի շարք պատճառներով տևեց մի ամբողջ դար (ցանկապատման վերջին դեպքը տեղի ունեցավ Անգլիայում 1905 թվին)։ Բայց դրա արդյունքները յերևան յեկան մոտավորապես 18-րդ դարի կիսերին, յերբ գործազուրկ ու հողազուրկ գյուղացիների «պահեստի բանակը» կազմվեց։*)

Հասկանալի յե, վոր գյուղացիների հողազրկումով

*) 1710-ից մինչև 1760 թ. ցանկապատվել է 300 հազար ակր. իսկ 1760-ից մինչև 1843-ը ցանկապատման է յենթարկվել հազարյա թե յոթ միլիոն ակր։

արհեստային կարգերի համար պիտանի աշխատավորների կադրեր չեյին ստեղծվում։ Գյուղացիական մասսան քաղաքի արդյունաբերական աշխատանք կատարելուն նախապատրաստված չեր. նա բառիս բուն իմաստով մատնվեց ճակատագրի անորինությանը։ Բայց մասամբ նույն իսկ արհեստային կարգերը ներս առան այդ կենդանի բանվորական ուժը. իսկ յերբ քարածուխի ոգնությամբ չուգուն և յերկաթ ձուլելու հնարը գտնվեց, վորով 17-րդ դարից սկսած լեռնարդյունաբերության զարգացման սկիզբը դրվեց, հնարավոր դարձավ, վոր գյուղի հողազուրկ բնակչությունն իր աշխատանքը գործադրի նաև քարածուխի հանքերում։ Ցեվ այն հանգամանքը, վոր համքյարական ձեռնարկների «ոժանդակ» ձեռքերը և հանքահանները կամ այլ ստորյերկրյա ու վերյերկրյա աշխատանք կատարող բանվորները վերցվում էին գյուղից դուրս գցված բանվորական ուժի նշանակալի «աղատ ավելցուկներից», ավելի մեծ քայքայումն եր մացնում նախկին համքյարական կարգերին հատուկ հարաբերությունների մեջ։ Ստեղծվում էին բոլոր նախադրյալները ժողովրդական տնտեսությունը կապիտալիստական ձևի վերածելու համար։

6. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Ինքնին հասկանալի յե, վոր աշխատանքի և կապիտալի միջև, կապիտալիստական ձեռնարկություններ ստեղծելուց առաջ վարձման հարաբերությունների գոյություն ունենալով իսկ ստեղծվում էին այն բոլոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են բանվորական շարժման համար։ Ցեվ այդ շարժումն իրոք կար։ Համքյարական ձեռնարկությունների վարձու բանվորներն, իրենց շահերի պաշտպանության նպատակով «ակումբներ» բացելով, քանի գնում, այնքան ավելի հաճախ էին դուրս գալիս իրենց

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՊԵՊՔԻ Գոս. գրադարան ՀՍՍՌ-Արմ. ՍՍՀ Ա. Մասիսյանի անվան

տերերի դեմ, վորպես բացահայտ հակառակորդներ։ Բավական բազմաթիվ են այն դեպքերը, յերբ դեռ ևս 18-րդ դարի կիսին բանվորներն Անգլիայում գործադուլ են հայտարարում։ Յեվ այդ բանվորների կազմակերպվածության աստիճանն այն ժամանակվա համար բավական բարձր եր։

Բայց դասակարգային շահերի հակասությունները դեռ ևս բավարար չափով յերևան չեյին յեկել և դրանով վերոհիշյալ յելույթները զրկվում եյին անհաշտ դասակարգային պայքարի բնույթից։ Պրոլետարացվող վարպետացուների բացած ակումբները վոչ թե առաջադիմական պահանջներ եյին անում, այլ հետադիմական և պահպանողական ցանկություններ՝ համքյարական կարգերի պահպանման մասին։ Մասնավորապես համարյա թե ամբողջ 18-րդ դարի ընթացքում ակումբներն աշխատում եյին պետական կարգավորման յենթարկել աշխատավարձի հարցը—Յեղիսաբեթյան որենդրության (աշխատավարձի նվազագույնի և առավելագույնի մասին), ինչպես և աշակերտների թվի սահմանափակման ու աշակերտության շկոլան չանցած բանվորների վարձեն արգելելու և այլ միջոցներով։

Արդյունաբերական հեղաշրջումով է միայն, վոր բանվոր դասակարգի մեջ վերջնականապես յերևան են գալիս նոր դասակարգային հարաբերությունները։ Ինչպես հայտնի յե, դեռևս 1555 թվին վարպետ—կապիտալիստները փորձում եյին բրդեղեն գործվածքների աշխատանքը հանձնել տնայնագործներին, վորոնք իրենց տանն եյին աշխատում։ Բայց այդ ձևն այն ժամանակ դեռ ևս փոքր ի շատե մեծ չափերով չեր գործադրվում։ Դա ժողովրդական տնտեսության կազմակերպման գերիշխող ձև է դառնում միայն 18-րդ դարից սկսած Անգլիայում և փոքր ինչ ավելի ուշ՝ մյուս յերկրներում։ Յեվ նույն իսկ այն ժամանակ, յերբ առևտրական կապիտալի ազդեցությունը ժողովրդական տնտեսության վրա սկսում է ուժեղանալ, դասակարգային հարաբերությունները դեռ ևս չեն զրվում։ Տնայնագործն իր արտադրանքը գնողի ստրուկն է դառնում. այդ գնողը վաշխառվական գներով հում նյութ և անձնական սպառման առարկաներ է հայթայթում տնայնագործին. բայց նրանց միջև վոչ թե աշխատանքի գնողի և աշխատանքի վաճառողի հարաբերություններ են ստեղծվում, այլ ապրանքի վաճառողի և ապրանքի գնողի հարաբերություններ։ Տնայնագործն իր տնտեսական անկախությունը չի կորցնում նույն իսկ այն ժամանակ, յերբ իր արտադրած մանուֆակտուրան գնողը պարքերի մեջ է թաղում նրան։ Յեվ միայն այն ժամանակ, յերբ արտադրության կազմակերպությունը զուտ կապիտալիստական գծեր է ստանում, յերբ նա գործարանային է դառնում—դասակարգային հարաբերություններն առաջին անգամ ձեռք են բերում այն հստակությունն ու պարզությունը, վոր հետագայում նրանց մշտական հատկանիշն է մնում ժողովրդական տնտեսության կապիտալիստական կարգերում։

7. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ

Դասակարգային գիտակցության յերևան գալու խնդրում այդպիսի դեր խաղացող արդյունաբերական հեղաշրջման եյությունն այն եր, վոր արտադրության կապիտալիստական կազմակերպության շրջանում աշխատողը բոլորովին զրկվում եր արտադրության գործիքների սեփականատիրության վերջին խաբուսիկ իրավունքներից։ Մենք արդեն ասել ենք, վոր դեռ ևս արհեստային շրջանի վարպետացուն, վորը վարպետ դառնալու ձևական իրավունքն ուներ, միշտ չե, վոր կարողանում եր ոգտվել այդ իրավունքից՝ անհրաժեշտ կապիտալ չունենալու պատճառով։ Բայց նրա իրավունքն այնուամենայնիվ պահպանվում եր։ Տնայնագործ արհեստավորը, մինչև կոկորդ խրված լինելով գնողից վերցրած պարքի մեջ, ճիշտ նույն ձևով իր

արտադրության գործիքների տերն եր մնում, մինչև վոր դրանք պարտքի փոխարեն «վեր դրվեցին»։ Նրա սեփականատիրության իրավունքը խաբուսիկ եր։ Բայց և այնպես պահպանվում եր։ Իսկ յերբ մանուֆակտուրայի գործը կազմակերպվեց, այսինքն յերբվոր արդյունաբերությունը տեղավորվեց կապիտալիստին պատկանող մեծ շենքում և գործադրության դրվեցին արտադրության գործիքները, վորոնք նույնպես հիշյալ կապիտալիստին եին պատկանում, բանվորների համար այնպիսի դրություն ստեղծվեց, վոր նրանք այլևս վոչ թե ձեռնարկության տերն եին, այլ նրա կենդանի և մեռյալ կահույքի (ինվենտարի) մի մասնիկը։ Հասկանալի յե, վոր մանուֆակտուրային գործարանների տնտեսական առավելությամբ ապահովվում եր նրանց հաղթանակը տնայնագործական արհեստի դեմ մղվող մրցության մեջ, իսկ 18-րդ դարի յերկրորդ կիսի հնարումները (изобретения) ազգակ հանդիսացան, վոր կապիտալիստական Ֆաբրիկան առգությամբ հրապարակից դուրս բռնի մանր արհեստը։

Յեվ հենց այս դուրս քշելն եր, վոր մեկ անգամից և չափազանց հիմնդագին յեղանակով մերկացրեց կապիտալիզմի բոլոր դասակարգային հակասությունները։ Գործարանի աշխատանքի պայմանները հարված եին բանվորին՝ մինչ այդ չտեսնված ուժով։ Պարզվեց, վոր այդ պայմանները շատ ավելի վատ են, քան համքյարական շրջանի վարպետի մոտ աշխատող աշակերտի ու վարպետացուցի աշխատանքի պայմանները։

«Ֆաբրիկաներն,—ասում է մի բուրժուական տնտեսագետ,—իրենց բացասական կողմն էլ ունեին։ Գործարանային սիստեմի գոյության առաջին շրջանում ֆաբրիկայի բերած չարիքը աչք ծակելու չափ ակնհայտ եր, համենայն դեպս այդպես եր անդրադառնում բանվորների բարորության վրա։ Բոլորովին տարբեր հասակների պատկանող յերկու սեռի անձեր իրար գլխին եին թափ-

ված հսկայական հանրակացարաններում այնպիսի պայմաններում, վորոնք հակասում եին ամեն մի բարոյականության։ այդտեղ բացակայում եին չե թե միայն առողջապահության պայմանները, այլ և անհրաժեշտ հարմարությունները, անգամ հասարակ վայելչության հնարավորությունները։ Արդյունաբերության հսկայական զարգացումն անհրաժեշտ դարձրեց աշխատանքի ուժեղացրած ոգտագործումը, և ֆաբրիկաներն որ ու գիշեր աշխատում եին։ Մեքենան, վոր ստեղծված եր աշխատանքը կրճատելու համար, շատ դեպքերում բանվորական որվա տևողականության անորինակ յերկարացման պատճառ դարձավ։ Այլ դեպքերում էլ նա գոյության միջոցներից զրկեց ձեռքի աշխատանք կատարող նախկին բանվորներին, սարսափելի և ապշեցուցիչ անակնկալությամբ»։

Յեվ այն, ինչ վոր ասում է այստեղ բուրժուական տնտեսագետը ֆաբրիկայի «բացասական կողմերի» մասին, լոկ մեղմացրած պատկերն է այն չարիքի, վոր բանվորի կյանքի մեջ մտցրին մեքենան ու ֆաբրիկան։ Վերջինս բանվորների համար մի դժոխք դարձավ։ «Фабричная девушка» (գործարանի բանվորուհի) անունը շուտով հայհոյանք դարձավ, վորովհետև այդպես եին անվանում այն խղճուկ ստրկուհիներին, վորոնք ամբողջապես ընկել եին անբարոյական գործատերերի իշխանության տակ։ Բայց մի թե Ռուսաստանում ևս, այն էլ անհամեմատ ավելի ուշ ժամանակներում, «фабричный» (գործարանում բանող) բառը համարյա թե հայհոյական բառ չեր։ Յուրաքանչյուր յերկրում, վոր արդյունագործության գործարանային կազմակերպության անցնելու շրջանն եր ապրում, այնպիսի դրություն եր ստեղծվում, վոր գործարանի աշխատողը մերժված, արհամարհելի եր դառնում . . . , վորովհետև գործարանային բանվորն իրոք ստրուկից վատ եր։ Կապիտալիստները կանանց հարկադրում եին ած-

խանութներում ածուխով բեռնված ձեռնավագոններ քաշել։ Իսկ յերկար նրբանցքներն ել (կորիդոր) ծախսերը կրճատելու նկատառումով այնքան նեղ եյին շինվում, որ բանվորուհին միշտ սեղմված եր լինում սողալով, չորեքթաթի տալով կատարել այդ աշխատանքը, խեղդուկ ոդն ել հո հարկադրում եր նրան հանել համարյա թե բոլոր շորերն ու մերկ մնալ։

Ութից տասներկու տարեկան մանուկների, յերբեմն ել ավելի փոքրահասակների, բանվորական որվա տևականությունը 14-16 ժամից ավելի յեր։ Հյուծված և ուժից վեր աշխատանքից վաղաժամ ծռմռված անդամներով մանուկները խղճալի ու այլասերված եյին դառնում...

Իսկ դրան զուգընթաց, այդ գերմարդկային աշխատանքի վարձն ել այնքան քիչ եր, որ դրանով մի բանվորը չեր կարող նույն իսկ ամենահասարակ սնունդն ստանալ։ Բանվորների համարյա թե կեսն ոգտվում եր այն նպաստից, որ այն ժամանակ տրվում եր չքավորներին Անգլիայում։

«Գարշահոտության մեջ, չափից դուրս տաքացրած սրահներում, հաղարավոր արագ պտտող անիվների աղմուկի տակ,—գրում եր այն ժամանակվա ֆաբրիկաների կյանքն անմիջական կերպով դիտողներից մեկը, Լորդ Ալֆրեդ,— փոքրիկ մատիկներն ու փոքրիկ տոտիկներն (մանուկների) անվերջ լարված աշխատում եյին. նրանց դեպի անբնական աշխատանք եյին քշում վերակացուի ծանր բռունցքի կամ դրանից վոչ պակաս ծանր կոշիկի հարվածները, ինչպես և անկշտում յեսասիրությամբ այլասերված ուղեղների հնարած մարմնական պատժի գործիքները»։

Պետք է արդյոք զարմանալ, որ նոր դասակարգի, գործարանային բանվորների շրջանում, տնտեսական կյանքի նոր ձևն, (որն անվիճելիորեն բարձրացրեց ժողովրդի բարեկեցությունը, բայց աշխատանքի այդպիսի հրեշավոր շահագործման հասցրեց), ընդունվեց—և չեր կա-

ղող այդպես չընդունվել,—որպես ամենաչար դիտավորության ծնունդ, որպես պատմության կողմից աշխատանքի դլխին թափած մի անեծք։ Յեվ բանվորների շրջանում, որոնց գործարանատերերը վարձում եյին նախկին վարպետացուների և դյուղից յեկածների միջից, և տնայնագործների ու նախկին արհեստավորների շրջանում, որոնց աշխատավարձն ընդամենը տասնհինգ տարվա ընթացքում կրճատվեց ու 1802 թվին 13 շիլինգ 10 պենսից 1817 թվին 4 շիլինգ $3^1/_2$ պենսի հասավ (մանածագործության ասպարիզում)—մեքենայական արտադրության ձևի մուծումը բնականաբար պետք է ամենաթունդ բողոքն առաջացներ։

8. ԿՈՒՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԴԵՄ

Հասկանալի յե, որ նոր-նոր ծնունդ առած բանվոր դասակարգի դասակարգային գիտակցության աստիճանը բարձր չեր։ Բանվորների մասսայի համար տակավին պարզ չեյին իրենց դժբախտությունների պատճառները։ Բացի այդ, բանվորներից շատերը կենդանի կերպով հիշում եյին այն տարիները, յերբ մեքենաներ չկային և յերբ վոր իրենք վոչ թե խղճուկ փշրանքներ եյին ստանում, այլ դատումներ (заработки), որոնք բավական եյին կուշտ և գոհ ապրելու համար։ Այս պատճառով նրանք իրենց բոլոր դժբախտությունների արմատ ու պատճառ մեքենան եյին համարում։

Յեվ առաջին շրջանում նրանց բոլոր ուժերն ու բողոքն ամբողջապես սկսեցին մեքենայի դեմ ուղղվել։

18-րդ դարի վերջում յեղակի դեպքեր են պատահում, յերբ դժգոհ բանվորները տակն ու վրա յեն անում ձեռնարկությունները։ Որինակ Ֆրանսիայի բանվորական շարժման պատմության մեջ մենք գտնում ենք յերկու դեպք, յերբ բանվորները Փարիզում հրդեհում են այն

ժամանակվա յերկու խոշորագույն կապիտալիստներ (մանածագործական ֆաբրիկաների տերեր) Ռեվելյոնի և Առնոյի ֆաբրիկաները 1791 թվին։ Անգլիայում ևս ֆաբրիկաների հրդեհման դեպքերը տեղի յին ունենում 18-րդ դարի վերջերում։ Բայց գործարանային տերերը կազմակերպված ձեվ միայն 19 րդ դարի սկզբներին ե ընդունում։ Սրինակ 1811-1812 թվին ամբողջ Անգլիան բռնված եր այսպես կոչված «Լեդդիտական շարժումով». բանվորության խմբերն, ըստ յերևույթին վորոշ ծրագրով ու վորոշ կազմակերպության հրահանգներով ղեկավարվելով, ջարդ ու փշուր եյին անում մանածագործական ձեռնարկությունների մեքենաները, իսկ հաճախ ֆաբրիկաներն ել եյին հրդեհում։ Ամբողջ բանվորական մասսան առհասարակ համակրությամբ եր վերաբերվում Լեդդիտների շարժմանը, վորոնց թռուցիկներն ստորագրում եր «Լեդդարքան» (այստեղից ե ծագել շարժման անունը) և ամենայեռանդուն ոգնություն եր ցույց տալիս նրանց։ Շարժման սկիզբը դրեցին տրիկոյի արդյունաբերության բանվորները (յերիզի բանված ք պատրաստողները), վորոնց պարագլուխ Գրեվեներ Գենտոնն եր, ինչպես կարծում են, այն «Լեդդ արքան», վորը չգտնվեց և վորի ով լինելը չպարզվեց։ Յերիզի բանված ք պատրաստողների կազմակերպությունն աչքի յեր ընկնում իր զարգացումով։ Որինակ Լեյստեր քաղաքի մերը (քաղաքագլուխը) 1811 թվին հաղորդում ե իր «իշխանավորներին», վոր Լեդդիստական շարժումը ղեկավարում ե յերիզի բանված ք պատր. կազմակերպությունը, վորի անդամները զինվորականների պես կարգապահ են։ Բայց կասկածից դուրս ե, վոր Լեդդիստական շարժմանը նպաստող միջոցները միայն յերիզի բանված ք պատրաստողներից չեյին ստացվում։

Ալյուսագործ բանվորների, քարտաշների, մանողների, ջուլհակների և հանքափորների շրջանում կատարված հանդանակությունները մեծ արդյունքներ տվին.

պակաս հաջող չեյին նաև գավառական քաղաքներում տեղավորված վորոշ գնդերի զինվորների շրջանում կատարված հանդանակությունները։ Այսպիսով բոլոր փաստերը դալիս են հաստատելու, վոր «մեքենաներ վոչնչացնողների» այս գաղտնի կազմակերպությունը բաղկացած եր վոչ թե միայն մի վորևե խմբի պատկանող բանվորներից, այլ ամենաբազմազան պրոֆեսիաներին պատկանողներից։ Ցեվ նա խիստ ուժեղ եր։ Մի կառավարական լրտես 1812 թվի հունիսի 22-ին զեկուցագրում ե, վոր «միությունը ծավալված ե Լոնդոնից մինչև Նոտտինգեմ, իսկ այնտեղից ել հասել ե Մանչեստերին ու Կարլեյլին։ Գլխավոր կենտրոնների միջև գտնվող փոքրիկ քաղաքներում, ինչպես որինակ Գարստանգում և Բարտոնում, դեռ ևս կազմակերպություններ չկան։ Միայն մի քանի պրոֆեսիաների պատկանողներ են առաջին յերդումը տվել»։

Բայց միայն «Լեդդիստական շարժումով» գործը չսահմանափակվեց։ Լեդդիստները գործում եյին գլխավորապես Նոտտինգեմում և Անգլիայի կենտրոնական շրջաններում 1811 և 1812 թվերին։ 1816 թվին գործարանային տերերի նոր նշանակալից պոռթկում ե տեղի ունենում, իսկ 1826 թվին Լանկաշիրն ե դառնում վոստայնանկի (մանածագործության) շոգեշարժ ստանոկների (ткацк. станок) խորտակման բեմ։ Ուրիշ խոսքով ասած, մեքենաների խորտակման միջոցով գործարանային դժոխքից ազատվելու հույսն ամբողջ յերկու տասնամյակ չի մեռնում բանվորների մեջ։

Ըստ ինքյան հասկանալի յե, վոր դեպի մեքենան ուղղված այդպիսի ատելությունը,—վորին ծնունդ եյին տվել այն իրական դժբախտությունները, վոր մեքենան եր բերել բանվորին—վկայում եր, վոր բանվորների դասակարգային գիտակցության մակարդակը ցածր ե։ Այն հանգամանքը, վոր նրանք չեյին հասկանում, թե մեքենան,

վորպես այդպիսին, արտադրության համար արժեքավոր նվաճումն է և միայն նրա սեփականատիրությունն է պայմանավորում բանվոր դասակարգի դրության անհերեվակայելի չափերով ծանրանալը, ցույց է տալիս, վոր բանվորության մեջ դեռ ևս կար ժողովրդական անտեսության հին ձևին, արհեստին ու ձեռքի աշխատանքին դառնալու ձգտումը, վոր նրանք դեռ ևս կապիտալիստական լծից ազատվելու միջոցների մասին պարզ պատկերացում չունեն։ Մանավանդ վոր մեքենաների գործածության դնելը, վորը միայն դանդաղությամբ ու աստիճանաբար ը կատարվում (նույն իսկ մանածագործական արդյունաբերության մեջ միայն 20-ական թվականների վերջերին ը, վոր մանածագործային մեխանիքական ստանոկը բոլորովին դուրս քշեց հրապարակից ձեռնաշարժ ստանոկին), դեռ ևս հույս ը ներշնչում, թե բանվորներին կհաջողվի խուսափել այն լծից, վոր բերում էին նրան մեքենան և արտադրության կապիտալիստական կազմակերպությունը։

9. ՈՒՏՈՊԻՍՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Համարյա թե մեքենաների դեմ կույր խռովության ծագման հետ միաժամանակ, ծագում է նաև հասարակական հարաբերությունների մեջ նոր սկզբունքներ մտցնելու փորձը, սկզբունքներ, վորոնք գալիս էին բանվոր դասակարգն ու ամբողջ ժողովուրդն ազատելու վերահաս կապիտալիզմի սարսափներից։ Ուտոպիստական սոցիալիզմն է ծնվում։ Սեն-Սիմոն ու Ֆուրիյեն Ֆրանսիայում, Ռոբերտ Ոուենն Անգլիայում և փոքր ինչ ավելի ուշ Վեյտլինգը*) Գերմանիայում սկսում են իրենց ծրագրերը կազմել կատարյալ հասարակության մասին, վորը պետք է ստեղծվեր վոչ թե իշխանությունը նվաճող և իր

*) Սեն Սիմոնն ու Ֆուրիյեն ֆրանսիական ուտոպիստներ, սոցիալական բարեկարգիչներ էին. նրանք ապրել և գործել են

կյանքն իր դասակարգային շահերին համապատասխանող սկզբունքներով վերակառուցող պրոլետարիատի դասակարգային պայքարի ընթացքում, այլ այն պիտի ստեղծեին թագավորները, կապիտալիստները ու գիտնականները, գալով այն յեզրակացության, վոր կապիտալիստական շահագործումն անթույլատրելի է։

Բոլոր ուտոպիստների ուսմունքների մեջ կա մի առանձնահատկություն, վոր ընդհանուր է նրանց բոլորի և մեքենաների խորտակիչների համար։ Վերջիններն աշխատում էին վերացնել կապիտալիստական շահագործումը գործարանային տերերի՝ մեքենայից ազատվելու միջոցով. այն մեքենայից, վորի շնորհիվ կապիտալիստն իշխում էր բանվորներին։ Ուտոպիստները նպատակ էին դրել գոյություն ունեցող գործարանային արտադրության կազմակերպությունից անկախ ստեղծել այնպիսի ապաստարաններ, վոր շահագործվողները, կապիտալիստական արտադրության ձեռքից փախչելով, կարողանան ապաստանել այդ տեղերում։ Ամենից պարզ կերպով արտահայտված է այս միտքը Ֆուրիյեի և Ոուենի ուսմունքների մեջ։ Ինչպես Շարլ Ֆուրիյեն, այնպես էլ Ռոբերտ Ոուենը, ծրագրում էին ստեղծել —առաջինը՝ «ֆալանստեր», իսկ յերկրորդը՝ «ներդաշնակ շահեր ունեցողների ինքնավար համայնքներ», այսինքն նոր հասարակակարգի բջիջներ— այն ժամանակ գոյություն ունեցող և արագությամբ կապիտալիստական հասարակության փոխվող կարգերի ներսում։ Ֆալանստերը մի շարք ամենաբազմա-

19-րդ դարի առաջին կիսին։ Ռոբերտ Ոուենը —ծագումով անգլիացի— սոցիալական բարեկարգիչ և ուտոպիստ էր. գործել է նույն ժամանակաշրջանում, ինչ և Ֆրանսիայի ուտոպիստները։ Վեյտլինգը գերմանացի դերձակ էր. մինչև Մարքսն ու Ենգելսը Գերմանիայում ամենից ակնավոր հեղափոխական-կոմունիստն էր, իր ուսմունքի բնույթով՝ ուտոպիստ։ Սա գործել է 19-րդ դարում։

գան զբաղմունքների տեր մարդկանց մի փակ կոմունայի շուրջը համախմբող մի կազմակերպություն եր։ Այդտեղ ամեն ինչ պետք է արվեր կոմունայի անդամների միջոցներով և այդտեղ կոմունայի յուրաքանչյուր անդամ պետք է փրկություն գտներ կապիտալիզմի պատճառած չարիքներից ու աղետներից։ Ֆուրիյեն իր վողջ կյանքի ընթացքում սպասում եր, թե իրեն անհրաժեշտ միջոցները կբերեն և ինքն այդպիսի կոմունայի ստեղծման կանցնի։ Ռոբերտ Ուեենն ևս ճիշտ այդպիսի մի բանի յեր սպասում։ Նա Ֆուրիյեյից ավելի բախտավոր գտնվեց և մի քանի կոմունա ստեղծեց ինչպես Անգլիայում, այնպես եվ Միացյալ Նահանգներում (Ոբիբատոն, Կվինսվուդ և այլն), վորոնք կապիտալիստական արտադրության մրցությանը չդիմանալով և ներքին տարաձայնություններից կազմալուծվելով, շատ շուտով կործանվեցին։ Բայց իրոք ինչ եյին ներկայացնում իրենցից այդ կոմունաները։ Իհարկե միայն ապաստանարաններ, կապիտալիստական շահագործման զոհերի ապաստանարաններ։ Ուտոպիստները կարծում եյին, թե կապիտալիստական հասարակության ներսում նման կոմունաներ ստեղծելով, նրանք այդ հասարակության մեջ նոր կարգերի բջիջներ են ստեղծում։ Դեպի այդ բջիջներն են ձգտելու ամենքը և այդ պատճառով նոր կարգերի բջիջներն արագությամբ կփոխարինեն արտադրության կապիտալիստական կազմակերպությանը։ Ռոբերտ Ուեենը յերեսնական թվականներին հաստատապես համոզված եր, վոր չի անցնի նույն իսկ վեց ամիս, վոր իր ծրագրերը կընդունվեն բոլորի կողմից և յերկրագնդի վրա խաղաղություն ու բարյացակամություն կթագավորի։

Դասակարգային պայքար կազմակերպելու փոխարեն, ուտոպիստներն առաջարկում եյին բանվորներին խուսափել կապիտալիզմից։ Այսպիսով նրանց ուղին միանգամայն այլ եր, քան մեքենաների խորտակողների ընտրածը։ Բայց

խնդրի եյությունը նույնն եր մնում. վոչ թե արտադրության նոր տեխնիկայի և նոր դասակարգային հարաբերությունների օգտագործում, այլ խուսափումն այդ բոլորից։ Սակայն «մեքենաների խորտակիչների» համեմատությամբ, ուտոպիստ սոցիալիստներն ունեյին այն մեծ առավելությունը, վոր նրանք պարզ պատկերացումն ունեյին արտադրության միջոցների սեփականատիրության նշանակության մասին և այդ սեփականատիրությունը բանվոր դասակարգին վիճակված դժբախտության աղբյուր եյին համարում։ Ֆալանստերների և ներդաշնակ շահերի կոմունաների կազմակերպության մեջ թե Ֆուրիյեն և թե Ուեենն արտադրության միջոցների ընդհանուր սեփականություն եյին մտցնում, այդ կոմունան մեքենաների մասնավոր սեփականատիրությանը հակադրելով։ Ու թեև նրանք կարծում եյին, թե կապիտալիստները կամովին համաձայնվելու յեն կոմունաների կազմակերպմանը և դրանով են հասնելու կոմունիզմին, թեև նրանք կոմունաները համարում եյին կապիտալիզմից խաղաղ ճանապարհով խուսափելու մի միջոց,—այնուամենայնիվ նրանք կոմունիզմի նախակարապետներ եյին, պրոլետարիատի ապագա յելույթի մարգարեներ։

10. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Բանվորական կազմակերպությունների ծայը առնելը նախ քան կապիտալիստական ձեռնարկությունների ծնունդը և նրանց պայքարը վարձման պայմանների բարելավման համար, ինչպես և հեղափոխական արտադրությունների սկզբնավորվելը Ֆրանսիայում՝ ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանում և Անգլիայում նույն ժամանակաշրջանում ու ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ պատճառ դարձան, վոր ծնունդ առնի բանվոր դասակարգի և կառավարող դասակարգի բաղխումը։

Ֆրանսիայի արիստոկրատ, կալվածատերերի դլուխները թռչում այն հրապարակներում, որտեղ գիլիոտինները եյին կանգնեցրած. այդ կալվածատերերի վիճակից վախեցան Անգլիայում, որտեղ իրենց սեփական կալվածատերերը պատերազմ հայտարարեցին բոլոր բանվորական կազմակերպություններին։ 1799—1800 թվերին անգլիական մինիստրությունը հրատարակում է յերկու որենք, որոնցով խստորեն պատժվելու եյին բանվորական կազմակերպություն ստեղծելու բոլոր փորձերը. իսկ մի շարք դատեր, ձերբակալություններ և այլն հարկադրում եյին բանվորներին կամ-ակամա դուրս գալ իշխանության դեմ՝ իրենց կազմակերպությունն ունենալու իրավունքը պաշտպանելու համար։ Ամբողջ քսանհինգ տարի յե տևում այդ պայքարը (մինչև 1824-1825 թ թ.) և ավարտվում է նրանով, որ վերացվում են ընկերակցություններին վերաբերվող որենքներն, ու արհեստակցական միություններ, ակումբներ, խմբակներ և այլն կազմակերպելու հնարավորություն է ստեղծվում։ Գործադուլի և անգամ գործատերերի հետ բանակցելու միջոցով, իրենց դրությունը բարելավելու ամեն մի փորձ ընդհարման առիթ է դառնում. և ընդհարվում են ոչ այնքան գործատերերի, որքան պետական իշխանության հետ։ Առաջին քառորդ դարում Անգլիայում դեպքեր եյին լինում, յերբ գործատերերի հաժանությամբ նրանց հետ իրենց ընկերների անունից և նրանց հանձնարարությամբ բանակցող բանվորներին վոստիկանությունը ձերբակալում ու տանջալի տարիներով աքսորում եր Ավստրալիա, Թասմանիա և այլ վայրեր, որոնք այն ժամանակվա անգլիական իշխանության համար ռուսական Սիբիրի դերն եյին խաղում։ Մեկ անգամ ել ձերբակալման յենթարկվեցին տպագրողների ներկայացուցիչները, որոնց բանվորները գործատերերի խնդրանքով ընտրել եյին, որպես դի հատուկ աշխատանքների

ցուցակին վերաբերվող հատուկ ձայնագիր մշակեն... Հասկանալի յե, որ այս դեպքում նույն իսկ ամենաանգիտակից բանվորի համար ակնհայտ եր դառնում, որ առանց պետական կարգերի փոփոխման աշխատողների տնտեսական դրության վոչ մի բարելավում չի կարող կատարվել արդյունաբերության և վոչ մի ճյուղում։ Յեվ մենք տեսնում ենք, որ այս պատճառով 19-րդ դարի առաջին տասնամյակներում արդեն ծնունդ է առնում քաղաքական—դասակարգային պայքարը։

11. ՉԱՐՏԻԶՄ

Այս քաղաքական պայքարն Անգլիայում մի շարք քաղաքական պահանջների համար մղվող պայքարի ձև ընդունեց. այդ պահանջները գրված եյին մի հատուկ ցուցակում, որը «չարտ» (քարտ բառը, որ նշանակում է թուղթ, գրություն—անգլիերենում «չարտ» է հնչվում) անունն ստացավ. հենց այստեղից ել վերցված է այդ շարժման «չարտիզմ» անունը։ Չարտիստները առաջադրում են բնդհանուր հավասար յեվ ուղղակի ընտրողական իրավունքի, ամեն տարի պարլամենտի անդամների վերընտրություն կատարելու, 21 տարեկան հասակին հասած արական սեռի բոլոր անձանց ընտրական իրավունք տալու և այլ պահանջներ, որոնք հիշատակված են պատմական «ժողովրդի ազատության» գրության վեց կետերում։

Թեև բուն չարտիստական շարժումն սկսվում է 1836 թվին և տևում մինչև 1848 թիվը, բայց դեռ ևս քսանական թվականների վերջին, մասամբ ընկերակցություններին վերաբերվող որենքների դեմ մղվող պայքարի հետևանքով, և դրանից ել առաջ, սկսվում է մի շարժում, որն իր վոգով մոտ եր չարտիստականին և փաստորեն նրան անմիջապես նախորդողն եր։

Որինակ, 1793 թվին Լոնդոնում ստեղծվում է Գրա-

գրության Ընկերությունը, որի քարտուղարը նախկին կոշկակար Թոմաս Գարդին (հետագայում մահապատժի յենթարկված) եր և որն ուներ ավելի քան 10 հազար բանվոր անդամներ։ Ճիշտ է, այդ ընկերությունը, ինչպես նաև ավելի ուշ ստեղծված չարտիստական կազմակերպությունը, զուտ պրոլետարական կազմակերպություն չեր, բայց կարևորագույն նշանակությունն այդ ընկերության մեջ ունեցին բանվորները, որոնք շարունակում են մնալ նրա մեջ նաև այն ժամանակ, երբ Լյուդովիկոս 16-րդի մահապատիժը վանում-հեռացնում է բուրժուազիային այդ ընկերությունից։ Յեվ ընկերության գործոն անդամ մնացած բանվորները շարունակում են կապ պահպանել Փարիզի Սենտ-Անտուան արվարձանի բանվորների հետ, որի հետևանքով կառավարությունն սկսում է հալածել նրանց՝ պետական դավաճանության մեջ մեղադրելով (այդ միջոցին Անգլիան արդեն պատերազմ եր մղում հեղափոխական Ֆրանսիայի դեմ) . . . Զարտիզմի ծնունդ առնելուց առաջ ել անգլիական բանվորական շարժման պատմության մեջ բազմիցս յերևան են գալիս բաղաքական վերաշինության հակումներ՝ վերաշինություն, որ պետք է կատարվեր կամ Գրագրության Ընկերության ծրագրով, (այս ընկերությունն ևս չարտիստների պես անհրաժեշտ եր համարում պարլամենտի վերընտրությունները կատարել տարին մեկ անգամ՝ ընդհանուր ընտրական իրավունքի հիմունքներով), կամ ավելի ճիշտ ձևով՝ չարտիզմի ծրագրով։ Ընտրական ռեֆորմի համար մղվող պայքարին, որպիսի ռեֆորմն Անգլիայում տեղի ունեցավ 1832 թվին, և Ֆրանսիայում թագավորի իշխանությանը վերջ տալու համար մղվող պայքարին, որը վերջացավ 1830 թվի հեղափոխությամբ,— բանվոր դասակարգն արդեն ամենաաչքի ընկնող չափերով եր մասնակցում։ Բուրժուազիան փաստորեն նրա ուժերով եր «սահմանադրական կարգեր» նվաճում։

Չարտիզմը, որը հաղթական վախճանի չհասցրեց բանվորական պահանջների պայքարը և 18.8 թվականից հետո հեռացավ պատմության ասպարեզից, այնուամենայնիվ իր դերը կատարեց։ Նա բանվոր դասակարգի ուշադրությունը բաղաքական դասակարգային պայքարի վրա բեվեռեց և հանեց այն պարզ եզրակացությունը, որ տնտեսական շինարարության բոլոր հարցերը լուծելու համար անհրաժեշտ է քաղաքական իշխանությունը նվաճել։

Ենգելսի հայտարարությունը չարտիստների մասին գրում է 1848 թվին, չարտիզմի կործանման նախորյակին, այն մասին, որ ինքը չարտիստ է ոչ թե միայն անունով, այլ և իր եությամբ, չափազանց արժեքավոր մատնանշումն է չարտիզմի հենց այդպիսի դերի։

Յեվ իրոք, լայն հոսանքով չարտիստական շարժման մեջ մտած բանվորական մասսան մի շարք ականավոր պարագլուխներ տվեց. այդպիսիք են Ջեմս Բրոնտերը, Ո. Բրայենը, Ֆերգյուսը, Ո. Կոնոլլիը, Մակդուալը և ուրիշները, որոնք արդեն պարզ ու հստակ կերպով պատկերացնում եյին դասակարգային պայքարի ամբողջ նշանակությունը, և թեև հաճախ խարապես սխալվում և նույն իսկ շատ բան ավելի եյին շփոթում, բայց այնուամենայնիվ նրանք կարլ Մարքսի և Ֆր. Ենգելսի նեղափոխական սոցիալիզմի իսկական նախապատերն եյին։ Հատկապես դեպ նրանք լավ եյին գիտակցում, որ կապիտալիստների շահերը քաղաքական պայքարի ասպարիզում ել տարբեր են բանվորների շահերից։ Որինակ, չարտիզմի ղեկավարներից մեկը, Ուեդը, գրում է բուրժուական կազմակերպության պարագլուխ Ատտվուդին. «Մեր կազմակերպության գործոն անդամների մեծ մասն ունևորներից է բաղկացած—հատկապես նրանք ավելի յեն շահագրգռված, որ պարլամենտում ներկայացուցչություն նվաճեն ավելի շուտ

սեփականությունը պաշտպանելու, քան թե իրենց անձի համար։ Սրան ապացույց կարող է ծառայել այն հանգամանքը, որ անհիշելի ժամանակներից ի վեր ունևորները իշխանությունն իրենց ձեռքին են ունեցել, որպեսզի մշակեն այն ոլորտները, որոնց ներգործության արդյունքը պետք է համարել այն, որ այսոր մեկ կողմում հակայական հարստություններ են կուտակված, իսկ մյուս կողմում՝ սով է ու չքավորություն»։ Մինչդեռ, հենց իրենց, չարտիստների համար ընտրական իրավունքը բանվորական մասսաների շահերը պաշտպանելու միջոց էր միայն։ Ստեֆենսը, որ նրանց պարագլուխներից մեկն էր, գրում է. «Եթե ինձ հարցնեին, թե ինչ է ընդհանուր ընտրական իրավունքը, կասեի. այդ նշանակում է, որ յուրաքանչյուր բանվոր իրավունք ունի լավ շոր հագնել, ապրել լավ բնակարանում, ունենալ լավ ճաշ և աշխատել վոչ ավելի, քան առողջությունն է թույլ տալիս»։ Եվ այն հանրագրերում, որ ներկայացնում էին չարտիստները պարլամենտին — առաջինում, որի տակ կար ավելի քան 1,300,000 ստորագրություն և յերկրորդում, որին ստորագրել էր ավելի քան 3 միլիոն հոգի (շատ դեպքերում միևնույն մարդիկ մի քանի անգամ էին ստորագրում), այն միտքն էր հայտնվում, որ ընտրական իրավունքը լոկ մի պայման է կապիտալիստական կարգերը նորով փոխելու, որտեղ աշխատանքն այլևս չի շահագործվելու և կապիտալն այլևս չի իշխի աշխատանքի վրա։

Չարտիզմը բանվորական շարժման զարգացման նոր փուլն էր, — մի փուլ, որով շարժումը որոշակի կերպով հեղափոխական խմորումների շրջանը թևակոխեց։ Պետք է նկատել, որ Անգլիայում, — իսկ չարտիզմը տեղ գտավ միայն այդ յերկրում, — նույն այդ ժամանակամիջոցում բանվորական շարժման բոլոր ձևերը հեղափոխականության վոգով էին ոգորված։ Այդ միջոցին (յերևանական թվականներ), արհեստակցական շարժումն արտադր. ձեռնարկների ընդհանուր միությունը ձև էր ընդունում, որոնք նպատակ չէին գնում միայն բարելավել բանվորների դրությունը ձեռնարկներում, այլև ունեցին ուրիշ նպատակներ։ Որինակ Ռ. Ոուենի մերձավոր մասնակցությամբ կազմված և այն ժամանակվա ամենախոշոր միավորումներից մեկը հանդիսացող արտադր. ձեռնարկների միավորված ազգային մեծ միության կանոնադրության մեջ այդ շարժման նրպատակն այսպես է բնորոշվում. «Թեև միության նպատակն է առաջին հերթին բարձրացնել աշխատավարձը կամ նրա նոր նվազեցման առաջն առնել կամ կրճատել բանվորական ժամերի տևողությունը, — բայց նրա վերջնական նպատակը պետք է լինի հաստատել աշխատանք սիրելու և մարդասիրության գերագույն իրավունքներն այնպիսի միջոցների գործադրությամբ, որոնք ըստ ամենայնի կպաշտպանեն մեզ այն անվայել վերահսկողությունից և մեր աշխատանքի պտուղների բահաթը տնօրինելուց, որ սխալավոր դրամական սիստեմի ոգնությամբ կատարում են հասարակության ագետ, պորտաբույծ և անոգտաբեր անդամները։ Այս պատճառով, միության անդամները պետք է ձեռքից բաց չթողնեն և վոչ մի աննշան հնարավորություն, որպես զի նպատակն ամեն մեկում՝ իրականացնելու այն նոր կարգերը, յերբ հասարակության իրոք ոգտակար ու բանական անդամները միայն կղեկավարեն գործերը, և աշխատասիրությունն ու առաքինությունը պատշաճ հավանության ու վարձատրության կարժանանան, իսկ անգոտնելի ծուլությունը — պատշաճ արհամարհանքի ու չքավորության»։ Ուրիշ խոսքով ասած, 40 հազարից ավելի անդամ ունեցող ընկերության կանոնադրության մեջ կապիտալիզմը կոմունիզմով փոխարինելու նույնպիսի ձգտում ենք տեսնում, ինչպես և չարտիզմի մեջ։ Արհեստակցական շարժման և չարտիզմի ընթացած ուղիները տարբեր են, բայց

նրանց վերջնական նպատակը միևնույնն է։ Ճիշտ նույն ձևով կոոպերացիան էլ այդ ժամանակ նպատակ է դնում — թեկուզ և, ինչպես դասակարգային պայքարի փորձը ցույց տվեց, դա կոոպերատիվ կազմակերպության ուժերից վեր էր — սահմանել կապիտալիզմին փոխարինող տնտեսական հարաբերությունների այնպիսի նոր կառուցվածք, որը կկարողանար ազատել աշխատանքը շահագործումից...

Այսպիսով չարտիզմը և նրա հետ միաժամանակ գոյություն ունեցող բանվորական շարժման ձևերն, արդեն հստակորեն պատկերացնում էին բանվորական շարժման նպատակները։ Իսկ ինչ վերաբերվում է այն մեթոդներին, որոնք չարտիզմն անհրաժեշտ է համարում գործադրել այդ նպատակների համար մղվող պայքարում, պետք է ասել, որ դրանք պակաս հեղափոխական չէին, քան այդ նպատակները։ Շատ շուտով չարտիզմը բաժանվում է «խաղաղասեր» և հեղափոխական թևերի։ Վերջինս հաղթող է հանդիսանում, և ամբողջ շարժումն իշխանություն նվաճելու համար հեղափոխական յուրաքանչյուր նախապատրաստության ուղիով է ընթանում։ Բազմաթիվ միտինգներում, — որ գործունեության գաղտնի լինելու պատճառով հաճախ գիշերներն էին գումարվում — բանվորներին կոչ էին անում զինվել և պատրաստվել ապստամբության... Այսպիսով բանվոր դասակարգի ձեռքով իշխանությունը վաճառն այժմ մտնում է պրոլետարիատի գործելակերպի մեջ, որպես մի կարևոր հանգամանք։

12. 1848 ԹՎԻ

Այն թիվը, որ Անգլիայում վկան ու ականատեսն եր չարտիզմի կործանման, Ֆրանսիայի համարձակաբար բանվորական ապստամբության տարին դարձավ ճիշտ է, այստեղ ևս, ինչպես և Անգլիայում, պրոլետարիատը դեռ ևս բոլորովին ինքնուրույն չեր ապստամբվում։ 1848 թվականի հեղափոխությունը, որը նա փաստորեն իր ուսերի վրա տարավ, իշխանության գլուխ կանգնեցրեց վոչ թե պրոլետարիատին, այլ բուրժուազիային։ Բայց և միևնույն ժամանակ, ինչպես չարտիզմն Անգլիայում, այնպես էլ այդ շարժումը Ֆրանսիայում, վորոշեցին բանվոր դասակարգի բոնելիք դիրքը։

Ֆրանսիայի պրոլետարիատի հեղափոխական յելույթի նախապատրաստումը կատարվում է այդ յելույթից շատ առաջ։ Փաստորեն դեռ ևս 1830 թվին Ֆրանսիայի բանվոր դասակարգն արդեն պայքարի յե յելնում կապիտալիզմի դեմ, հնչեցնելով Լիոնի բանվորների նշանաբանը — «Աղքել՝ աշխատելով, կամ մեռնել՝ պայքարելով»։ Այն դեպքը, յերբ բանվորները Լիոնում իշխանություն նվաճեցին, նախակարապետն եր 1848 թվի հեղափոխության, վորին նախորդեց բանվորական շարժման ընդհանուր կենդանությունը։ Բանվորական գաղտնի ընկերություններն — վորոնք, ի դեպ, դասակարգային կազմի տեսակետից վոչ-միշտ եյին անխառն, — ինչպես, որինակ, «Տարվա յեղանակների ընկերությունը», պրոլետարիատի ամենատոտիկ յելույթի նպատակ վորոշակի կերպով դնում եյին սոցիալական հեղափոխությունը, որ պետք է «վոչինչ չունեցող ժողովրդին հանձներ վոչինչ չչինող մարդկանց սեփականությունը»։ Գատմաբան Դե-Տոկվիլը, մի ազատամիտ գրող, — որ «հին ռեժիմի» (միապետության) կործանումն է պատկերացրել, պատգամավորների պալատում, ասում եր. «Մենք դուք չենք զգում, որ կարծեք թե հեղափոխության հոտ և փչում։» Բայց միայն նրա համար չե, այլև առհասարակ բուրժուական դասին պատկանող բոլոր փոքր և շատ խոհական պետական մարդկանց համար, պարզ եր, որ պատմությունն անխուսափելի յե։

Բայց բանվորները, վորոշակի կերպով պատկերացնելով սեփականական կարգերի փոփոխման անհրաժեշտությունը և «ազատության, հավասարության, եղբայրության» լոզունգն առաջ քաշելով,

փրկության միջոց էին համարում ոչ թե պրոլետարիատի դիկտատուրան, այլ բնական ռեֆորմը։ Անգլիացի չարտիստների նման, սրանք ևս բնական իրավունքը համարում էին այն լծակը, որով իրենց կհաջողվի որեն-ադրությանը տալ պահանջված ուղղություն և մղել դեպի «աշխատանքի կազմակերպումը»։ Դրանից ոգևորվեց մանր չեվ խոշոր բուրժուազիան, որի նրկատմամբ այնքան էլ բարեհաճ չէր ֆինանսիստների թագավոր Լուի Ֆիլիպի ռեժիմը, որ միայն խոշոր սպեկուլյանտներին էր հովանավորում։ Իրենց բանկետներում ու ժողովներում ազատամտները ձգտում էին միջոցներ գտնել, որպեսզի բանվորական շարժումը մոլորեն ոչ թե բանվորական, այլ պարլամենտական հանրապետության համար մղվող պայքարի հունի մեջ։ Կառավարության հալածանքները, որ պայթեցին թե ազատամիտների և թե բանվորների գլխին, բանվոր դասակարգն այդ մոքով ոգ-տագործելու հնարավորություն տվեցին, որովհետև բանվորներին ստիպեցին ազատամիտների հետ միասին միացյալ ճակատով դուրս գալ ընդհանուր թշնամու դեմ։ 1848 թվի սկզբներին Փարիզում և մյուս քաղաքներում խռովություններ սկսվեցին, որոնք, յերբ ճնշման փորձ արվեց, բարրիկադային կռիվների փոխվեցին։ Փետրվարին «բանկիրների արքան» փախավ, և միապետությանը փոխարինեց հանրապետությունը։

Այսպես եր հեղափոխության ընթացքը։ Դա գլխավորապես բանվոր դասակարգի գործն եր. բայց նա բուրժուազիայի հետ լիակատար համերաշխությամբ եր գործում։ Հասկանալի յե, որ բուրժուազիան չեր բաժանում պրոլետարիատի հույսերը։ Ընդհակառակն, իր դիկտատուրայի հաստատման հասնելով, նա փորձեց ջախջախել իր դաշնակցին։

Այդ տեսակետից առաջին ակար կոալիցիոն սկզբունքի

գործադրումն եր՝ ժամանակավոր կառավարություն կազմելու ժամանակ։ Վերջնիս կազմի մեջ մտցրվեց ուտոպիստ-սոցիալիստ Լուի Բլանը, որն այն ժամանակ ֆրանսիական պրոլետարիատին քարոզում եր աշխատանքի կազմակերպումը հասարակական արհեստանոցների միջոցով կատարել և մեծ ժողովրդականություն եր վայելում բանվորական թաղերում։ Կառավարության մեջ մտցրվեց նաև բանվոր Ալբերը, որը Լուի Բլանից պակաս ժողովրդականություն չեր վայելում բանվորների մեջ։ Փարիզի պրոլետարիատն այս ճանապարհով բուրժուական մինիստրության հետ կապելով, բուրժուազիայի դեկավարները գործադրեցին յերկրորդ միջոցը։ Առյերեվույթս գիջելով բանվորների պահանջներին, Լուի Բլանի ուտոպիստական ծրագիրները կատարելապես վարկաբեկելու նպատակով, նրանք ազգային արհեստանոցներ ստեղծեցին։ Արհեստանոցների գլուխ կանգնեցրին վոմն Թոմայի, որին գաղտնի առաջադրանք եր տրվել—արհեստանոցներում գործն այնպես դնել, որ նրանք պետության ուժերից վեր և միանգամայն անոգուտ բան դառնան։ Թոման փայլուն կերպով կատարեց իրեն տրված առաջադրանքը։ Որպես յերկու ֆրանկ վճարելով, նա հարկադրում եր բանվորներին նախ հորեր փորել և տերրասներ պատրաստել և ապա լցնել հորերն ու քանդել տերրասները։ Աշխատանքն անիմաստ եր, բանվորների մեջ ծայրական վերաբերմունքը եր ստեղծվում դեպի իրենց սեփական անձը և ստիպում իր մտածել, թե այդպիսի աշխատանքի համար տրվող յերկու ֆրանկը պարզապես վողորմություն է։ Գյուղացիության համար ել արհեստանոցների կազմակերպումն ապացույց եր այն քանի, որ բանվորները միայն գյուղացիների ու քաղքենիների հաշվին տրվող վողորմությամբ ապրող ձրիակերներ են։ Այդպիսի «ձրիակերներին» թիվը հարյուր հազարի հասավ։ Հասկանալի յե, որ քաղքենիներն ու գյուղացիությունը

պատրաստ եյին վողջունելու ամեն մի ձեռնարկում, վոր վերջ կդներ պետական միջոցների այդորինակ վատնումին։

Այսպիսով բուրժուազիայի վերոհիշյալ յերկու միջոցներն ել առաջադրված նպատակին հասան։ Մեկ կողմից Լուի Բլանի և Այլերի ժամանակությունը կկառավարության մեջ,—վորտեղ նրանց վճռական ձայն չեր տրվում և վորտեղ նրանց վիճակվեց հաժարյա թե անընդհատ նիստեր ունենալ բանվորների նյութական և բարոյական վիճակն ուսումնասիրող հանձնաժողովում,—կապում եր Փարիզի բանվորների ձեռքն ու վոտքը։ Նրանք կառավարության այդ յերկու անդամներին իրենց ներկայացուցիչներն եյին համարում և այդ պատճառով վոչ թե նոր կռիվների եյին պատրաստվում, այլ այդ յերկուսի աշխատանքի արդյունքներին եյին սպասում։ Մյուս կողմից ել Լուի Բլանի առաջարկած իսկական «ազգային արհեստանոցների» փոխարեն, այսինքն փոստարեն արտադրության միջոցների սոցիալիզացիայի փոխարեն, պրոմոկացիոն նպատակներով կազմակերպվեցին այնպիսի հասարակական աշխատանքներ, վորոնք ժողովրդական տնտեսության մեջ վոչ մի նշանակություն չունեցին և միայն միջոցների և ուժերի անտեղի վատնումն եյին։

Այս աշխատանքը կատարելուց հետո, բուրժուազիայի կառավարությունը նախապատրաստեց նաև բանվորական ապստամբության բացահայտ ճնշման միջոցները։ Յերբ բավականաչափ ուժեղացրվեց բանակի կարգապահությունը և վոստիկանությունը նորից նախկին ոգևորությունը ձեռք բերեց, կառավարությունը, վոր մեծ թվով բանվորներ եր բարոյալքել, նրանց գոյության միջոցները վոչ թե արդյունաբեր աշխատանքով ձեռք բերելու, այլ պետության հաշվին ապրելուն ընտելացնելով, «ազգային արհեստանոցները» փակելու վորոշում ընդունեց, դրանով անպատրաստ բանվորների համար արդեն իսկ ստեղծված բուրժուական կառավարության դեմ յելնելու առիթ ստեղծելով։ Յեվ դժգոհ բանվորներն իրոք վոտքի յելան, ու կառավարությունը, վոր իր հետևն ուներ վոչ թե միայն բանակի սվիններն, այլ և գյուղացիությունն ու քաղքենիները, կարողացավ հաղթել ապստամբներին։ Զորս որ տևեց Փարիզի պրոլետարիատի պայքարը բուրժուական բանակի դեմ, բայց վերջինս, վորի շարքերում ավելի քան 500 հազար զինվոր կար, կարողացավ հաղթել հարյուր հիսուն հազար բանվորներին, վորոնք, բացի այդ, ապստամբության համար ժամանակին կազմակերպված ել չեյին։ Զախջախումը կատարյալ եր։ Յերեք հազար հինգ հարյուր ապստամբ զնդակահարեցին, ավելի քան հինգ հազար հոգու տաժանակրության ուղարկեցին։

1848 թվի շարժումը Ֆրանսիայում վերջացավ բանվոր դասակարգի պարտությամբ ճիշտ այնպես, ինչպես և չարտիզմի համապատասխան շարժումն Անգլիայում։

13. 30-ԱԿԱՆ ՅԵՎ 40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՑՔՐԻ ԴԱՍԵՐԸ

Ինչով հայտնի գարձան բանվորական շարժման զարգացման պատմության մեջ չարտիզմն ու 1848 թիվը։ Այդ անցքերով ավարտվեց բանվոր դասակարգի մեջ տեղի ունեցած խմորումների շրջանը։ Տակավին նոր կերպարանավորված և արդյունաբերական հեղափոխության ծոցից նոր դուրս յեկած պրոլետարիատն այդ անցքերի միջոցով դասակարգային գիտակցության զարգացման առաջին աստիճանն ել անցնում։ Բուրժուազիայի հետ միասնաբար հանուն ընտրական իրավունքի պայքար մղելու միջոցով նա հասավ այն աստիճանին, վոր նրա համար պարզ դարձավ բանվորների յեվ հասարակության բոլոր մյուս դասակարգերի շահերի անհամատեղելիությունը։

Յեթե իր գոյության արշալույսին բանվորը կապվ

տալիստական արտադրության դերին դարձավ և այդ պատճառով խարազանում ենք ժամանակը, որը կապ ուներ կապիտալիզմի հետ, իր դրության պատճառ համարելով մեքենան,—չեթե այնուհետև ուտոպիստական սոցիալիզմի ազդեցությամբ նա կապիտալիստական հասարակության շրջանակներում կապիտալիստական շահագործումից ազատվելու ապասանարան ստեղծելու փորձերին ձեռնարկեց և, վերջապես, անցավ ընտրական իրավունքի համար պայքարելու փորձերին—չարտիզմից և 1848 թվի հեղափոխությունից հետո նրա մեջ առաջին անգամ պարզ պատկերացում ստեղծվեց որ ոչ թե միայն կապիտալիզմի, այլ և կապիտալի բաղարական գերիշխանության վերացման անհրաժեշտության մասին։ Նրա համար պարզվեց, որ կապիտալիզմի դեմ պայքարելու հիմնական պայմանը, պրոլետարական դիկտատուրայի համար պայքարելն, անխուսափելիություն է։

14. «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏՆ» ՈՒ 1-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Այսպիսով չարտիզմի և 1848 թվի հեղափոխության փորձը ցույց տվեց, որ բանվորների շահերը հակառակ են բոլոր մյուս դասակարգերի շահերին, որ բանվոր դասակարգի հիմնական նպատակը—շահագործման վերացումը—կարող է իրականացվել միայն արտադրության միջոցների մասնավոր սեփականատիրության վերացումով և կապիտալիզմը կոմունիզմով, այսինքն արտադրության հասարակական կազմակերպությամբ, փոխարինելով, ընդ որում հատուկ պայքար մղելը շահագործողների դեմ և պետական իշխանությունը պրոլետարիատի կողմից վերջնականապես խլելն ու պրոլետարական դիկտատուրա հաստատելը՝ հասարակությունն այդ ձևով վերակառուցելու անհրաժեշտաղույն պայմանն են։

Վերոհիշյալ անցքերի այս դասերը հիմնական թեզիսները դարձան «Կոմունիստական Կուսակցության Մանիֆեստի», որի սկզբնական նախագիծը կազմել էր Ենգելսը և որը վերջնականապես միասնաբար գրեցին Կ. Մարքսը և Ֆ. Ենգելսը։ Ճիշտ է, չի կարելի ասել թե ամբողջ բանվորական մասսան կանգնեց «Կոմունիստական Մանիֆեստի» տեսակետի վրա և յուրացրեց 30-40 թվականների անցքերի բոլոր դասերը։ Ինքնին հասկանալի է, որ բանվոր դասակարգը, որպես այդպիսին, կազմվում է կապիտալիստական ձեռնարկներում վարձու աշխատանք կատարող փոշիացած մարդկային մասսայից ոչ թե մեկ անգամից, այլ տևական պայքարի հետևանքով։

Եվ նույն իսկ այժմ, երբ նոր կարգերը, պրոլետարական դիկտատուրայի կարգերը, արդեն հիմնավորապես հաստատվել են խորհրդային Ռուսաստանում, մենք տեսնում ենք, որ դասակարգային գիտակցությունը միևնույն մակարդակի վրա չի կանգնած ամբողջ պրոլետարիատի մեջ։ Առաջավոր բանվորները—աշխատանքի ասպարիզում ներկայումս ամենուրեք միայն փոքրամասնություն են կազմում—հստակորեն պատկերացնում են դասակարգային պայքարի զարգացման պատմական ընթացքը, բուրժուական պարլամենտարիզմը խորհուրդների հանրապետությամբ փոխարինելու անխուսափելիությունը և կոմունիզմի տեսական շինարարության նույնպիսի անխուսափելիությունը։ Բայց մնացած մասսան դեռ ևս չի կարողացել լիովին յուրացնել այս ամենը։ Եվ չեթե կարելի չէ խոսել այն մասին, որ բանվոր դասակարգը յուրացրեց 30-ական և 40 ական թվականների դասերը չարտիզմի և 1848 թվի հեղափոխության կործանումից հետո, այդ էլ միայն այնպես պետք է հասկանալ, որ վերջապես, բանվորական մասսայի մեջ կազմվել են բջիջներ, որոնք լիովին յուրացրել են այդ դա-

սները և այդ պատճառով ընդունակ են դարձել բանվորական շարժման պատմության ընթացքում առաջին անգամ առեղծելու իսկական դասակարգային ծրագիր ունեցող իսկական դասակարգային կուսակցություն։

Այդպիսի կուսակցություն էր Մարքս-Ենգելսի կուսակցությունը և այդպիսի ծրագիր՝ «Կոմունիստական Մանիֆեստում» բերված ծրագիրը։

Միանգամայն բնական է, որ հարկ է, որ սկզբում այդ կուսակցությունը, իր գործունեության մեջ «Կոմունիստական Մանիֆեստ»-ի հիմունքների վրա հենված մնալով, թվականապես թույլ և բավական քան իմաստով փոքրագային կուսակցություն էր։ Չէ որ հասնել դասակարգային գիտակցության այնպիսի բարձրության, որպիսի բարձրության վրա «Մանիֆեստ»-ի հեղինակներն էին կանգնած, այն ժամանակ կարող էին միայն անհատներ և, բավական դեպքում, առանձակ բանվորներ։ Իսկ մինչ որ շարժման միջազգայնականությանն և վերաբերվում, պետք է ասել, որ այստեղ հենց իրեն, կապիտալիզմի, միջազգայնականության փաստը և դասակարգային պայքարի հնարավորությունը բոլոր կապիտալիստական երկրներում — անխուսափելի էին դարձնում գանազան երկրների պրոլետարական ավանդարդի անմիջական փոխադարձ կապը։

Բանվորների միջազգային կազմակերպություն ստեղծելու փորձերը տեղի էին ունենում 1848 թվի հեղափոխության և չարտիզմի ջախջախումից հետարյա թե անմիջապես հետո։ 1849—1851 թվերի ընթացքում Անգլիայում փոքրաքանակ հող և պատրաստվում միջազգային բնույթի ամուր կազմակերպություն ստեղծելու համար։ Մի շարք ժողովներ են տեղի ունենում և այդ ժողովներում հանդես են գալիս համաշխարհային պրոլետարիատի ականավոր ներկայացուցիչները։ Այսպես, որինակ, 1851 թվի փետրվարին, յերբ հաղորդագրություն և

տարածվում, որ հունգարական հեղափոխության մասնակիցներից մեկը, գեներալ Բեմը, մեռել է Կ. Պոլսում, «Ցեղբայրական դեմոկրատներ»-ի կազմակերպությունը (մոտ 260 անդամ ուներ), որ միշտ աչքի յեր ընկնում իր համակրությամբ դեպի միջազգայնականությունը և որով մոտ էր չարտիզմին,—հունգարական և լեհական միությունների հետ միասնաբար մի մեծ միտինգ գումարեց, որտեղ խոսեցին գերմանական պրոլետարիատի ներկայացուցիչ Շապպերը և Լուի Բլանը։ Ի հիշատակ փետրվարյան հեղափոխության, շուտով տեղի ունեցավ յերկրորդ միտինգը, նույն այդ հոսանքների մասնակցությամբ։

Միևնույն ժամանակ մի շարք փոքրիկ կազմակերպություններ միշտ արձագանքում էին միջազգային անցքերին, աշխատելով ինտերնացիոնալիստական տեսակետներով ու համոզմունքներով դաստիարակել բանվորական մասսան։ Վերջապես 1854 թվին, վորպես բողոք ընդդեմ Նապոլեոն III-րդ-ի Անգլիա այցելելու և նույն միջոցին նույն յերկիրը ժամանող 1848 թվի հեղափոխության մարտիկ Բարբեսին վոդջունելու համար, նախաստեղծվեց բողոքի և վոդջունման կոմիտե և ապա այդ կոմիտեյից ծնավ մի մշտական կոմիտե, որը կազմակերպեց մի շարք ցույցեր և նպատակ եր դրել պայքարել հանուն բանվոր դասակարգի ազատագրության։ Այդ կոմիտեն վերջի վերջո սկսեց «Միջազգային Կոմիտե» կոչվել և նրա կազմի մեջ մտան Երնեստ Ջոնսը՝ նախագահ, Չ. Դենդեյը, գանձապահ և ազգային կազմակերպությունների քարտուղարներ՝ Զամպենը՝ անգլիացիներից, Տալանդիեն ֆրանսիացիներից, Բլեյը՝ գերմանացիներից, Դեմբինսկին՝ լեհերից, Պեձին՝ իտալացիներից և Սայլվատելլան՝ իսպանիացիներից։ Այդ կոմիտեն ճշտությամբ կանխեց ինտերնացիոնալի կազմակերպչական հիմքերը, որոնք (ինտերնացիոնալն), ինչպես հայտնի է,

հիմնվեց 1864 թվին նույն այդ Լոնդոնում տեղի ունեցած ժողովում։ Իսկ ինչ կոմիտեի գործողության ծրագրին և վերաբերվում, Ջոնսն այդ ծրագիրը այսպես է շարադրել իր թերթում («Ժողովրդական թերթ») 1855 թ. հունվար-27-ին. «Անգլիայում չքավոր և ճնշված մարդիկ կան։ Ֆրանսիայում կան շահագործվող և քայքայված բանվորներ։ Նրանք պատկանում են միևնույն ժողովրդին, միևնույն տերկրին, միևնույն կրոնին, միևնույն անցյալին, միևնույն ներկային, միևնույն ապագային։ Նույնը կարելի է ասել նաև բոլոր ազգերի, բոլոր ցեղերի, աշխատավորության բոլոր մասերի նկատմամբ։ Թող միանան դրանք։ Մարդկության ճնշողները միացած են նույն իսկ այն ժամանակ, երբ պատերազմում են։ Նրանց միացնում է մի ընդհանուր նպատակ. նրանք միացած են, որպեսզի ժողովուրդներին պահեն չքավորության մեջ ու ճնշման տակ։ Դեմոկրատիաներն առանձին-առանձին գուցե և չկարողանան թոթափել իրենց լուծը, բայց միանալով նրանք անհաղթ կը բերեն բարոյական ուժ և կրկնապատկած զորություն, որին ոչինչ չի կարող դիմանալ»...։ Մեկ ուրիշ տեղում նույն Ջոնսը գրում է. «Թող պարզ լինի այսորվա ժողովի իմաստը. մենք այսոր միայն արիստոկրատիայի դեմ չենք, որ խաչակրաց արշավանք ենք սկսում... Մենք ամենքս դեմ ենք նաև կապիտալի հարբահարությանը»։

Այսպիսով 1848 թվից մինչև I-ին Ինտերնացիոնալի հիմնադրման թվականը տեղ ունեցող ամբողջ ժամանակվա ընթացքում պրոլետարիատը —ի դեմս իր առաջադեմ խավերի— հատկապես միջազգային կազմակերպություն ստեղծելու փորձեր է անում։ Վերջի վերջո այդ կազմակերպությունն ստեղծվում է 1864 թվի սեպտեմբերի 28-ին Լոնդոնի Սենտ Մարտին Հոլլում գումարված միտինգի որոշման հիման վրա և իր գործունեության հիմքում դնում է «Կոմունիստական Մանիֆեստ»-ի թեզիսներն, իսկ «Մանիֆեստ»-ի հեղինակներ Մարքսն ու Ենգելսը միևնույն ժամանակ հեղինակն են դառնում նաև այդ Ինտերնացիոնալի կանոնադրության և նրա սկզբունքային ընույթ կրող նախաբանի...

Ինչ է նշանակում այնպիսի մի միջազգային կազմակերպության ծնունդ առնելը, որպիսին Ինտերնացիոնալն էր։ Առաջին հերթին Ինտերնացիոնալն, իհարկե, համաշխարհային մասշտաբով դասակարգային պայքար մղելու համար ստեղծված մի կազմակերպություն էր։ Ճյուղավորված և թվականապես զորեղ կազմակերպություն չլինելով, նա հատկապես ագիտացիայի և պրոպագանդայի համար ստեղծված մի ապարատ էր։ Դրանով իսկ նա հետագայում պրոլետարիատի կուտակվող դասակարգային ուժերի կենտրոնական կազմակերպությունն է հանդիսանում։ Յեվ Ինտերնացիոնալի այդ դերի շնորհիվ, նրա կազմակերպման սկիզբ 1864 թվականը դառնում է պրոլետարիատի դասակարգային ուժերի կուտակման շրջանի սկզբնավորման թվական։ Ավարտելով բուրժուազիային աշխատակցելն ընտրական իրավունքի համար մղվող պայքարում,—գիտակցելով, որ բանվոր դասակարգի շահերը միանգամայն հակառակ են բուրժուազիայի, որպես դասակարգի, շահերին,—պրոլետարիատի առաջադեմ տարրերը դիմեցին մի տնական և խիստ մեծ խնդրի՝ բանվորական մասսան որպես դասակարգ կազմակերպելու խնդրի՝ լուծմանը։

15. ԴԱՍԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՇՐՋԱՆԸ

Ինչ ուղիներով է ընթացել և կարող էր ընթանալ բանվոր դասակարգի ուժերի կազմակերպումը։ Բանվորական ցրված մասսայից ինչպես է դասակարգ կազմվել։

Այս հարցերին պատասխանում է այն փաստը, որ Ինտերնացիոնալի կազմվելուն և խմբավորումներ ու կու-

սակցական բջիջներ ստեղծվելուն զուգընթաց՝ Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ յերկրներում բանվորների արհեստակցական շարժման զարգացման ու ամրապնդման պրոցես է տեղի ունենում։

Մենք գիտենք, որ կապիտալիստական հասարակության դասակարգային ներհակություններն անհաշտելի յեն։ Յեվ յեթե նույն իսկ վերջնական ներհակությունները բանվորական մասսայի հիմնական մասի համար վոչ պարզ են և վոչ ել հասկանալի,—վարձման պայմանագիր կնքելու մոմենտին ծագող ներհակություններն, ընդհակառակը, միանգամայն պարզ են նրա համար։ Բանվորական ուժ վաճառողը չի կարող չգգալ, որ իր շահերը վոչ մի կերպ չի կարելի հաշտեցնել այդ ուժը գնողի շահերի հետ։ Վերջինս ձգտում է բանվորական ուժը գնե ամենաեժան շուկայում, իսկ առաջինը, որ իր ուժի գնի թանկանալուն սպասելու հնարավորությունից զուրկ է, վորովհետև իր գոյության միջոցների միակ աղբյուրն իր աշխատանքը վաճառելն է, ստիպված է եժան վաճառեր այդ ուժը։ Այս պատճառով ել դասակարգային պայքարը վարձման պայման կնքելու մոմենտին է սկսվում։ Յեվ վորովհետև ձեռնարկուի դեմ գործադուլ անելիս և պայմանագիր կնքելիս իր ընկերների ոգնությանը դիմելու փորձ անող յուրաքանչյուր անհատ-բանվոր անխուսափելիորեն պետք է ձգտի տնտեսական պայքարի կուս կազմակերպություն ստեղծել, ուստի և պրոլետարիատի ուժերի կուտակման առաջին փուլն՝ արհեստակցական միությունների կազմակերպումն, արհեստակցական շարժման սկզբնավորվելն է։

Դասակարգը կազմակերպվում է վորպես այդ դասակարգի առանձին անհատների մեծագույն թվի միավորում և առաջացնում է այնպիսի կազմակերպություններ, վորոնք պաշտպանում են այդ դասակարգի վոչ մասսային ամենից ավելի հասկանալի և ամենից ավելի մոտիկ շահերն ու պահանջները։ Արհեստակցական շարժումը և արհեստակցական միությունը այն քուրան են, վորտեղ նախ կոփվում է բանվորների խմբական համերաշխությունն, ապա՝ արհեստակցականը և վերջապես՝ դասակարգայինը։

Ահա թե ինչու պրոլետարական շարժման պրոպագանդիստական կենտրոնների ամրացմանը զուգընթաց, մենք նկատում ենք, որ չարտիզմի և 1848 թվի հեղափոխության ձախողումից հետո զարգանում ու ամրանում է արհեստակցական շարժումը։ Ըստ ինքյան հասկանալի յե, որ այս վերջինի զարգացման ընթացքի վրա խիստ եյական՝ կերպով ազդում են շատ հանգամանքներ։ Անգլիայում, վորտեղ բանվորների դրությունը 1850 թվից հետո ընդհանրապես դեպի լավն ել գնում՝ շնորհիվ արդյունաբերության արագ զարգացման և ամբողջ հասարակության յեկամտի բարձրացման,—վորտեղ կապիտալիստներն այդ պատճառով ավելի շատ են դիմման հատաձայնում, քան արդյունաբերության արագ բարձրացում չունեցող յերկրներում և վորտեղ գոյություն ունեցին միություններ կազմակերպելու ավելի նպաստավոր վոստիկանական պայմանները (հանրային կազմակերպությունների ձևական ազատություն և անձի ազատություն),—շարժման ուճումն (հիշյալ շարժումն այդ ժամանակ առաջին անգամ ել վորոշ կազմակերպչական պլան ունենում) արագ թափով է կատարվում։ Ֆրանսիայում, որը Նապոլեոն III-ի կրունկի տակ ել զբաղված և խեղդվում ել հակահեղափոխական մթնոլորտում, արհեստակցական միությունների զարգացումը համեմատաբար դանդաղ ել։ Վերջապես 1868 թվից հետո, արհեստակցական միությունների կազմակերպումն ել և դառնում բանվորական մասսայի հերթական խնդիր և դառնում է փաստ 1968 թվին համազգերմանական բանվորական համագումարից հետո, որը մեծ ազդեցություն

թողեց բանվորական շարժման զարգացման վրա՝ նաև այլ յերկրներում։

Ինտերնացիոնալը նպատակ ու ծրագիր եր տալիս բանվոր դասակարգին և, նրա առաջադեմ խմբերին միավորում, համաշխարհային կազմակերպություն եր ստեղծում։ Իսկ կազմակերպության ընդունակ դարձած վողջ մասսան, կամ նրա նշանակելի մասը, համախմբում և դեպի դասակարգայի կռիվներ եյին առաջնորդում—արհեստակցական միությունները։

Ի հարկե, հաճախ բանվոր դասակարգի տոկուն կուսակցության ղեկավարությունից զրկված լինելով, միությունները այնպիսի կազմակերպությունների եյին վերածվում, վորոնք աշխատավարձի բարձրացման կամ բանվորական ժամերի կրճատման պայքարից դատ՝ ուրիշ վոչ մի նպատակ չունեյին։ Ի հարկե, շատ հաճախ —իսկ հետագայում ավելի ևս հաճախ—միությունները դառնում եյին այն զենքը, վորոնցից հիանալի կերպով ոգտվում եր բուրժուազիան, վորպես զի հանդցնի բանվոր դասակարգի հեղափոխական պրոթեստները, արհեստակցական միությունների պարագլուխների ոգնությամբ. չափավորության և կարգապահության հունի մեջ մտցնելով ամբողջ բանվորական շարժումը։ Բայց ուժերի կուտակման շրջանում, մինչև Փարիզի կոմունան, միությունները համեմատաբար նոր յերևույթ եյին, և դեռ ևս չեյին կարողացել յերևան հանել իրենց բացասական կողմերը։ Նրանցում դգացվում եր մի բան, վորն, ըստ Կ. Մարքսի բնորոշման, նրանց դարձնում եր «սոցիալիզմի շկոլա», վորն առորյա պայքարի փորձով սովորեցնում եր բանվորին՝ դասակարգային պայքար մղել հանուն սոցիալիզմի։

Զուր չե, վոր 1-ին Ինտերնացիոնալի կազմի մեջ մտան և Ռոբերտ Ասպլդարը, և Ոշերը, և անգլիական տրեդ յունիոնիզմի մի շարք ուրիշ պարագլուխներ, չընայած այն բանին, վոր հենց անգլիական տրեդ-յունիոնիզմի մեջ է, վոր ամենից առաջ յերևան է յեկել վոչ թե միայն բանվորի դասակարգային պայքարի վոգով դաստիարակում, այլև մանր զիջումների գնով կապիտալիզմի հետ հաշտվելու՝ միտքը։

16. ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ

Պարզվեց, վոր 1871 թվին բանվորության զգալի մասսան արդեն պատրաստված եր հասկանալու այն, վոր կապիտալիզմի լծից ազատվելը հնարավոր կը դառնա միայն այն ժամանակ, յերբ պրոլետարիատն իշխանությունը կխլի։ 1866 թվին Ինտերնացիոնալի անդամների թիվը մոտավորապես 70 հազար եր։ 1870 թվին նրա թվական կազմը հասավ ուշագրավ թվանշանի—2 միլիոն մարդու։ Յեվ վորովհետև Ինտերնացիոնալը միավորում եր տարբեր յերկրների բանվորներին «Կոմունիստական Մանիֆեստի» հիմնական գաղափարների հոգի վրա, ուստի միանգամայն հասկանալի յե, թե ինչու նա կարողացավ խոշոր պատմական դեր խաղալ պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության զարգացման մեջ։

Ճիշտ է, Ինտերնացիոնալի ներսում յերկու հոսանք կար—մարքսիզմն այնտեղ իր ախոյանն ուներ հանձինս բակունիզմի, անարխիստական մի ուսմունքի, վոր Միխայիլ Բակունինն ու նրա կողմնակիցներն եյին քարոզում. ճիշտ է, Ինտերնացիոնալի կազմակերպությունը, վոր ձգտում եր ընդգրկել վողջ համաշխարհային շարժումը, տակավին հեռու յեր կատարյալ լինելուց և չեր կարող միջազգային մասշտաբով ղեկավարել դասակարգային պայքար, բայց և այնպես պրոլետարիատի դասակարգային հասունության աստիճանն արդեն նկատելի կերպով բարձրացել եր և բանվորական մասսայի վորոշ մասն արդեն ժամանակ կերպարանավորվել եր, վորպես բանվոր դասակարգ։ Դրանով իսկ Ինտերնացիոնալն, ըստ ընկ. Լենինի

արտահայտության, «բանվորների միջազգային կազմակերպության հիմքը դրեց, կապիտալի վրա հեղափոխական գրոհ տալու համար»։ Իսկ այդ նշանակում էր, որ բանվորների առաջադեմ խմբերն ամբողջությամբ արդեն հանուն կոմունիզմի պայքարելու տեսակետի վրա էին կանգնել։

1870—1871 թվերի անցքերը ապացուցին, որ բանվոր դասակարգը յերևան բերի իր նոր մոտեցումն իր պատմական դերին։ Այդ միջոցին դասակարգային տեսակետն ամենամեծ զարգացման հասավ Ֆրանսիայում, և հատկապես Ֆրանսիայի կենտրոնում, Փարիզում էր, որ տեղի ունեցավ արտաքուստյանը տիրանալու առաջին փորձը բանվորների կողմից։

1870—1871 թվականների ֆրանս-պրուսական պատերազմը ծագեց գերմանական և ֆրանսիական կապիտալի հակամարտության արդյունքից. գերմանական կապիտալը ձգտում էր առանձին գերմանական պետություններից, ապագա գերմանական կայսրության ցրված մասերից, ստեղծել մի ամբողջական տնտեսական մարմին և ապահովել իր հում նյութի աղբյուրներն, իսկ ֆրանսիական կապիտալը կանգնած էր նրա ճանապարհին և խանգարում էր այդ նպատակին հասնել։ Բիսմարկը բոլոր գերմանական պետություններին միավորեց մի մաքսային միության մեջ, որով ապահովեց Գերմանիայի ամբողջականությունը և թշնամական վերաբերմունք առաջացրեց ֆրանսիական բուրժուազիայի մեջ, որն այդ բանն իր ֆինանսական հզորության համար վտանգավոր էր համարում։ Միևնույն ժամանակ ֆրանսիական բուրժուազիան դանում էր, որ իր շահը պահանջում է յերկրում մի թեթև արդյունաբերություն անել, որովհետև արդյունաբերության զարգացմամբ և բնակչության կուտակմամբ գլխավորապես քաղաքներում, Ֆրանսիայում հեղափոխական շարժման ալիքն ավելի յեր

դեպի վեր բարձրանում։ Այդ միջոցին ածխի արդյունաբերությունը Ֆրանսիայում ավելացել էր չորս անգամով և յերկաթի դային ցանցի յերկարությունը 1900 կիլոմետրից 17 հազարի յեր հասել 1870 թվին։ Համապատասխան չափով ավելացել էր նաև քաղաքային բնակչությունը. մինչդեռ 1828 թվին յերկրի ամբողջ ազգաբնակության 24 տոկոսն էր ապրում քաղաքներում, 1870-ին այդ տոկոսն արդեն 32-ի յեր հասել։ Արդյունաբերության այդորինակ զարգացումը կուռ բանվոր դասակարգ էր ստեղծում, որն ավելի ու ավելի յեր հեղափոխականանում։

Գործադուլի ալիքները քանի գնում, ավելի հաճախ էին վազվզում արդյունաբերական կենտրոնները, ամեն անգամ ավելի ուժեղանալով։ Ֆրանսիական պրոլետարիատը տարի տարու վրա Ինտերնացիոնալին ավելի ու ավելի մեծ թվով կողմնակիցներ էր տալիս, և առ 1870 թվականը վերջիններս արդեն 200 հազար հոգուց բաղկացած մի շոշափելի բանակ էին կազմում։ Զինված ընդհարումներն ևս հաճախ էին տեղի ունենում վոստիկանության հետ բանվորների մեջ, և խաղաղ ցույցերը հաճախ այդ տեսակի ընդհարման էին վերածվում։ Այս պատճառով, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև կոնֆլիկտը յերբվոր սրվեց, ֆրանսիական կառավարությունը հնարավոր համարեց օգտագործել կոնֆլիկտը «խռովարար մասսայի ուշադրությունը» տնտեսական և քաղաքական պայքարից պատերազմի ոգնությամբ հեռացնելու համար։

Սակայն ռազմական գործողություններն անպատասխան դուրս յեկան Նապոլեոն III-ի կառավարության համար։ Դեռ ևս յերկու ամիս չանցավ, որ կայսերական զորքերը հիմնովին ջախջախվեցին և Սեդանի մոտ կայսրն ինքը վերջնական պարտություն կրելով, ստիպվեցավ անձնատուր լինել թշնամու զորքերին։ Գերմանական զորքերը մինչև Փարիզ հասան,—և կայսրության չքացած կառա-

վարության փոխարեն՝ հանրապետության կառավարությունն ստեղծվեց։ Կայսերական զորքերի հանցագործությունները ու անհաջողությունները ապահովեցին նույնիսկ ակնհայտ կերպով միապետական մարդկանց հանրապետության կողմն անցնելը, վորովհետև նրանք գիտակցում էին, վոր յերկրի բնակչությունն այլ կարգեր չի հանդուրժի։ Բայց չնայած նրան, վոր Ֆրանսիայի պրոլետարիատի դասակարգային գիտակցության աստիճանը նշանակելի չափերով բարձր էր առաջվանից, բանվոր դասակարգն, այնուամենայնիվ, դեռ ևս բավարար չափով չէր յուրացրել դասակարգային պայքարի դասերը, վորպեսզի մեկեն պրոլետարական դիկտատուրայի հարց դնի։ Նա, կայսրության դեմ դուրս գալով և յերկրի պաշտպանության համար ազգային գվարդիա ստեղծելով հանդերձ, սկզբում հաշտվում էր այն դրության հետ, վոր իշխանությունն ընկել է հանրապետական և համարյա թե բացահայտ կերպով միապետական բուրժուազիայի ձեռքը (Տյեր և ուրիշներ)։ Սակայն ժամանակավոր կառավարությունը նախազգուշանում էր, վոր տրամադրության բարձրացումը պրոլետարիատի շարքերում և նրա գինվելը՝ կարող են վտանգավոր դառնալ բուրժուազիայի համար։ Ուստի բուրժուազիայի ամրացման նպատակով Տյերը և նրա զինակիցները շտապեցին ամենածանր պայմաններով հաշտություն կնքել գերմանացիների հետ, վորպեսզի արձակեն իրենց ձեռքերը՝ պրոլետարիատի դեմ կռվելու համար։ Այս ամենը նրանք բանվորներից ծածուկ էին անում, և կառավարությունը հավատացնում էր նրանց, վոր պատրաստ է պաշտպանել Փարիզը մինչև վերջին հնարավորությունը՝ միևնույն ժամանակ մայրաքաղաքի հանձնումը նախապատրաստելով։ Փարիզի պաշտպանությունը մի իսկական կոշմար դարձավ, վորովհետև բուրժուազիայի կողմից պաշտպանության կանչնեցրած գեներալներն անհաջողության էին մատնում ռազմական գործողու-

թյունները և գերմանացիների դեմ հերոսաբար պաշտպանվող բանվորներին ոգնելու համար միջոցներ ձեռք չէին առնում։ Վերջի վերջո Փարիզը գերմանացոց հանձնվեց, և կառավարությունը վորոշեց մաքրել «մայրաքաղաքը»։ Այս նպատակով նա նախ փոխադրվեց Բորդո, ապա Վերսայլ և այնտեղից Փարիզի պրոլետարիատի գինաթափման պայքար մղեց։ Ազգային գվարդիան, այսինքն փաստորեն Փարիզի բոլոր զենքի ընդունակ բանվորներն, անակնկալ կերպով զրկվեց իրեն տրվող հասույթից, վոր նրա գոյության միակ աղբյուրն էր։ Բացի այդ, մարտի 18 ին, լուսադիմին, ազգային գվարդիայի խմբերը գինաթափելու վորձ արվեց։ Ռեակցիոն գեներալների ղեկավարության տակ գտնվող մի քանի զինվորական մասեր փորձեցին փախցնել գվարդիայի թնդանոթները։ Բայց կառավարության այդպիսի յելույթը, վոր վերջնականապես դիմակազերծ արեց նրան, բացեց Փարիզի բանվորների աչքերը։ Իրենց թնդանոթները յուրանդուն կերպով պաշտպանելու յելան ազգային գվարդիականները։ Նրանց միացան նաև կանոնավոր զորքերը, վորոնք վոչ թե չենթարկվեցին իրենց գեներալի հրամաններին, այլև տեղնուտեղը գնդակահարեցին նրան... Ապստամբության ազդանշանը տրված էր։ Հեղափոխությունն սկսվեց։

Յեվ այս արդեն սոցիալական հեղափոխություն էր. ազգային գվարդիայի կոմիտեի բաց թողած կոչի մեջ ասված էր, վոր «Փարիզի պրոլետարները հասկացան, վոր իրենց սեփական բախտի տերը դառնալն ու իշխանությունն իրենց ձեռքն առնելը—իրենց սրբազան պարտականությունն է...»։

17. ԿՈՄՈՒՆԱՅԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Պրոլետարիատը կոմունայի կառավարության գլուխ կանգնեց։ Պրոլետարիատի կողքին էր գտնվում, նրան

ժանդակելով ու միաժամանակ նոր կազմակերպության զեկավարության ակտիվ-կերպով մասնակցելով, Փարիզի մանր բուրժուազիան՝ արհեստավորները, որոնց քայքայում էր խոշոր կապիտալը և որոնք այդ պատճառով նրա դեմ էին։ Մանր բուրժուազիայի հետ դաշնակցելը խանգարեց բանվոր դասակարգին, որ գուտ պրոլետարական իշխանություն ստեղծի և օգտագործի այն, որպես սոցիալական ազատագրության գործիք։ Հասկանալի է, որ սխալն այն չէր, որ պրոլետարիատն օգտվեց մանր բուրժուազիայի օգնությունից, այլ այն, որ այդ օգնությունը նա ստացավ համաձայնելով, որ մանր բուրժուազիան մասնակցի կոմունայի կառավարության կազմին։ Առաջին շրջանում Կոմունայի մեջ տեղ էր տրված նույն իսկ Փարիզի մերերին (մեր—քաղաքագլուխ), որոնք, սակայն, հոգուտ բուրժուազիայի լրտեսների դեր կատարելուց հետո, շտապեցին վերստին քաշվել։ Իրենք բանվորական մասսաներն այդ ժամանակ դեռ ևս գտնվում էին մանր-բուրժուազիայի ուժեղ ազդեցության տակ։ Պրուդոնը և իր ուսմունքը, որոնք ժխտում էին քաղաքական պայքարը և շեշտը դնում էին արհեստավորի համար վարկ կազմակերպելու ինդրի վրա, հակառակ խոշոր կապիտալի դրության, նշանակելի ժողովրդականություն էին վայելում բանվորների շրջանում, որոնք բավարար չափով չէին ազատագրվել արհեստավորի հոգեբանությունից։

Այս պատճառով, մանր բուրժուազիայի մասնակցելը կառավարության կազմին վերջին հաշվով նշանակում էր, որ այդ կառավարությունը դասակարգային տեսակետից խախտել էր իր սկզբունքները։

Կոմունայի քաղաքականությունն անվճռական և կիսամիջոցային էր։ Կոմունան ընդունեց մի շարք որոշումներ, որոնք վկայում են, որ նա մտադիր էր պրոլետարիատի սոցիալական ազատագրության հարց բարձրացնել, բայց այդ որոշումներից և ոչ մեկը չէր իրականացնում, չէր թուլացնում բանվորների դասակարգային թշնամիների զորությունը։ Այսպես որինակ, բնակարանի վարձի վճարումը հետաձգվեց, բայց տները կոմունալ չը հայտարարվեցին։ Լոմբարդներում գրավ դրված չքավորների իրերը արգելվեց վաճառել, բայց որոշում չհանվեց, որ դրանք պետք է վերադարձվեն գրավ դնողներին։ Կապիտալիստների կողմից անտեր թողնված ձեռնարկները հանձնվում էին բանվորներին, բայց նախագծված էր, որ ապագայում այդ ձեռնարկները պետք է գնվեն իրենց նախկին տերերից։ Մի խոսքով չկար և ոչ մի ձեռնարկում, որ հասատուն և որոշակի գեր կապիտալի գիկատուրայի մնացորդները վոչնչացնելու հարցը։

Այս հիմնական սխալը—կոմունայի քաղաքականության անորոշությունը և անկայունությունը, որի պատճառն այն էր, որ մանր-բուրժուական տարրերն ազդում էին այդ քաղաքականության վրա,—մի ամբողջ շարք ուրիշ սխալներ անելու պատճառ դարձավ։

Կապիտալի տիրապետությանը ուղղակի հարված հասցնելուց յերկյուղ կրելով, կոմունան խնամքով վերաբերվեց դեպի բանկերում պահվող վոսկու պաշարը և փորձեց առանց գրավելու՝ պահել այն։ Հետևանքն այն յեղավ, որ Փարիզում մնացած հավատարիմ բանկային ծառայողների միջոցով բուրժուազիան կամաց-կամաց Փարիզից դուրս տարավ վոսկու այդ պաշարը և կոմունայի անվճռականության շնորհիվ իր ձեռքը գցած միջոցներով կազմակերպեց Փարիզի պրոլետարիատի ջախջախումը։

Պակաս նշանակալից չէր նաև Կոմունայի գուտ ռազմական սխալը։ Յերբ որ մարտի 18-ին գիշերն սկսվեց վերսայլյան զորքերի հարձակումն ազգային գվարդիայի վրա, կառավարական զորամասերի զինվորների մեջ այնպիսի կազմալուծում կար, որ նրանց մի մասն ուղղակի անցավ ապստամբների կողմը, իսկ մյուս մասն էլ դիմադրության միանգամայն անընդունակ էր։ Տյերի կառա-

վարության Վերսայլ փախչելու ժամանակ, նա փաստորեն ամենաանշան հնարավորությունն անգամ չուներ դիմադրություն ցույց տալու հեղափոխական գվարդիականներին։ Տյերը նույն իսկ կարգադրեց թողնել կարևոր և ամրացված կետ Մոն-Վալերյենը, վորտեղից հեշտ եր կրակի տակ առնել կամ պաշտպանել Փարիզը։ Անցավ մի քանի որ, նախքան վերսայլցիներին աջողվեց վերակազմել բանակը և, ապահովելով գերմանացիների ոգնությունը, գերությունից վերադարձնել «հավատարիմ» զինվորների մարտական զորախմբերը։

Կոմունայի անվճռականությունն ու անվստահությունը դեպի իր սեփական քաղաքականությունն արտահայտվեց նրանով, վոր նա չոգտվեց թշնամու թուլությունից և հիմնավորապես չջախջախեց նրան, յերբ այդ բանն անելու լիակատար հնարավորության ներկայացավ։ Կոմունայի զորախմբերը նույն իսկ Մոն-Վալերյենը չգրավեցին, վորովհետև սկզբում այդ մասին վոչ վոք չմտածեց, քանի վոր ամբողջ ուշադրությունն ուղղված եր Կոմունայի խորհրդի ընտրության կազմակերպման վրա։ Իսկ յերբ պարզվեց, թե ինչ նշանակություն ունի այդ կետը Փարիզի պաշտպանության համար, կոմունարների խմբերն այնտեղ վերսայլցիների ուժեղ կայազոր գտան. վերսայլցիք ավելի հեռատես եին յեղել...

Վերջապես յերրորդ սխալը, վոր ի դերև հանեց Կոմունայի շանսերն այդ պայքարում և վորը բղխում եր Կոմունայի քաղաքականության անվճռականությունից ու անտոկունությունից, այն եր, վոր կոմունարները փաստորեն սահմանափակվել եին Փարիզով և նրա շահերով, հաշվի չառնելով այն, վոր Ֆրանսիան միայն Փարիզը չե և վոր մայրաքաղաքի սահմաններից դուրս կա բազմամիլիոն գյուղացիությունը, վորի ոգնության բացակայությունը չի թողնի, վոր կոմունարները կարողանան դիմանալ յերկարատև պայքարի։ Այս պատճառով Կոմունան,

կենաբոնացման դեմ լինելով, և Փարիզից գավառներին «թելադրանք անելուց» յերկյուղ կրելով, միայն Փարիզի համար եր որենքներ հրատարակում և բացարձակապես վոչնչով չեր կապում Փարիզի շահերը գյուղացիության շահերի հետ։ Հետևանքն այն յեղավ, վոր յերբ Վերսայլի կառավարությունը սահմանադիր ժողովի ընտրություններ կազմակերպեց, նրան հեշտությամբ հաջողվեց գյուղացիության լիակատար ոժանդակությունն ստանալ։ Կառավարության կազմը դարձավ համարյա թե միապետական և գյուղացիական։ Իսկ գյուղացիության ոգնությունը Վերսայլին հնարավորություն ընձեռեց կտրելու Փարիզն ամբողջ Ֆրանսիայից, նույն իսկ արդյունաբերական Ֆրանսիայից, և դադարեցնելու դեպի մայրաքաղաք պարեն տանելը։

18. ԿՈՄՈՒՆԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած իր բոլոր սխալներին, վորոնք նպաստեցին իր կործանմանը, Կոմունան այնուամենայնիվ ունի հսկայական նշանակություն, վորպես կապիտալիզմը կյանքի նոր, կոմունիստական կառուցվածքով փոխարինելու առաջին փորձ, վորպես պրոլետարական դիկտատուրայի կազմակերպման փորձ։

Ճիշտ ե, բանվոր դասակարգի միաձույլ դեկավար կուսակցության բացակայությունը խանգարում եր կոմունարներին ամբողջ գործն են գլխից ուղիղ տանել։ Բայց նախ և առաջ աստիճանաբար, պայքարի զարգացմանը զուգընթաց, Կոմունան քանի գնում, ավելի ու ավելի յեր կանգնում կոմունիստական շինարարության ճանապարհի վրա։ Պրոլետարիատը —նույն իսկ ամուր դեկավարությունից զուրկ,— չեր կարող չոգտագործել իր նվաճած իշխանությունը, վորպես կապիտալիստական լծից իրեն ազատագրելու միջոց։ Ապա բանվորական մասսայի առողջ բնազդն ևս վերջ ի վերջո թելադրում եր

նրան ուղղել իր կատարած սխալները։ Թեկուզ և մեծ դժվարություններով, բայց Կոմունան կյանքի նոր ձև է ստեղծում։

Կոմունայի ամենակարևոր նշանակությունն այն է, որ նա առաջինն էր, որ փշրեց պետական իշխանության, բուրժուազիայի իշխանության հին ապարատը և բանվորական պետություն ստեղծեց։ Մենք տեսանք, որ մինչև Կոմունան բանվոր դասակարգը հանդես էր գալիս ընտրական իրավունքի ընդլայնման պահանջով, աշխատում էր բուրժուական ներկայացուցչական իրավունքը տարածել տալ նաև բանվորների վրա։ Կոմունան առաջին անգամ անցավ պրոլետարական դիկտատուրայի, թեև ոչ միանգամից, որովհետև սկզբում Կոմունայի խորհրդի ընտրությանը մասնակցում էին բոլորը, և խորհրդի 80 անդամներից 15-ը մենշիկներ, այսինքն բուրժուազիայի կուսակցության, ներկայացուցիչներ էին (բուրժուազիայի մի մասը դեռ ևս չէր մեկնել Փարիզից)։ Կոմունայի իշխանությունը վերջի վերջո վերակազմվեց պրոլետարական դիկտատուրայի սկզբունքներով։ Որպես Հանրային փրկության կոմիտե, Խորհրդի վերակազմությունը չափազանց ուշ կատարվեց ու չկարողացավ փրկել Կոմունան, բայց նա այնուամենայնիվ ցույց տվեց պետության նոր տիպարության ուղին։

Բայց Կոմունան մյուս առաջադեմներում ևս պրոլետարական հեղափոխության ռահվիրա հանդիսացավ։ Թեև կոմունարների քաղաքականության անվճռականությունն ու անտակտությունը սեփականությունը չվերացրին, բայց Կոմունան այդպիսի նպատակ դրել էր իրեն։ «Փարիզը — ասված էր Կոմունայի կոչերից մեկում, ուզում է հող՝ գյուղացիների համար, արտադրության միջոցներ՝ բանվորների համար, աշխատանք՝ բոլորի համար։ Հողի պտուղը նրանց՝ ովքեր մշակում են այդ հողը»։

Այսպիսով Կոմունայի նշանակությունն այն էր, որ

նա «պրոլետարիատի դիկտատուրայի առաջին փորձն էր», ինչպես անվանեց նրան Ենգելսը. և ոչ թե «զինվորական-բյուրոկրատական մեքենայի մեկ ձեռքից մյուս ձեռք» անցնել էր նշանակում, այլ «այդ մեքենայի կործանում»։ «Բանվոր դասակարգի պայքարը, — գրում է Կարլ Մարքսն, — ընդդեմ կապիտալիստների դասակարգի և նրա շահերը ներկայացնող պետության, Փարիզի Կոմունայի շնորհիվ նոր փաստ թեակոխեց։ Համաշխարհային պատմական կարևորություն ներկայացնող նոր յելակետն այնուամենայնիվ նվաճված է»...

19. ԿՈՄՈՒՆԱՅԻ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՎԱԽՃԱՆԸ

Պրոլետարական դիկտատուրայի կազմակերպման առաջին փորձի վողջ պատմությունը վկայում է, որ նրա վախճանն անխուսափելի էր. Կոմունան կորստյան էր դատապարտված և՛ իր սխալների, և՛ միաձուլ ու ամուր ղեկավարության բացակայության պատճառով, և՛ այն ժամանակվա Ֆրանսիայի արտադրական ուժերի դրության շնորհիվ, և՛, վերջապես, շնորհիվ ֆրանսիական բուրժուազիայի դաշինքի գերմանական զինվորների հետ, որոնք ամբողջ ժամանակ պապդում էին Փարիզի ամրությունների պատերի տակ։

Յեվ իրոք։ Այն փաստը, որ Փարիզի պրոլետարիատն սկսեց իր ապստամբությունն առանց դասակարգային կուսակցության միացյալ ղեկավարության, որ նրա շարքերում կային և՛ ցենտրալիստներ, և՛ ֆեդերալիստներ, և՛ կոմունիստներ, և՛ պրուդոնիստներ, և ազատականներ, և՛ չափավորներ — վկայում էր, որ բանվոր դասակարգն ամբողջությամբ դեռ չեվ պատրաստված չէր պրոլետարական դիկտատուրայի համար և անկարող էր կիրառել բոլոր տն միջոցները, որոնք անհրաժեշտ են հասարակությունը, պետությունը և տնտեսությունը պրոլետարա-

կան դիկտատուրայի սկզբունքներով վերակառուցելու հա-
մար։ Պրոլետարիատը հասել էր այն դրության, որ նրա
համար պարզվել էր դիկտատուրայի, որպես կապիտալի
իշխանությունից ազատվելու միակ միջոցի, աճհրաժեշտու-
թյունը, բայց նա պարզ չէր տեսնում այն ուղիները, որոնք
պետք է տանեին դեպի այդ դիկտատուրան, և այդ
պատճառով անկարող էր հետևողական կերպով կիրառել
անհրաժեշտ ձեռնարկումները։ Կոմունարներին մահա-
պատժի յենթարկելու առթիվ Կոմունան սպառնաց, որ
յուրաքանչյուր կոմունարի փոխարեն յերեք պատանդ
կը կդնդակահարվի, բայց մանր-բուրժուական ազդեցու-
թյունների շնորհիվ ատանվում էր գործադրել իր սպառ-
նալիքը։ Կոմունայի բոլոր սխալները բղխում եյին նրա-
նից, որ պրոլետարիատն անպատրաստ էր իր պատմական դե-
րի համար։ Իսկ այդ անպատրաստությունը բղխում էր
այն ժամանակվա Ֆրանսիայի արտադրական ուժերի վի-
ճակից՝ արդյունաբերության անբավարար զարգացումից,
պրոլետարիատի, որպես դասակարգի, յերիտասարդու-
թյունից և գյուղատնտեսության գերակշռությունից՝ Ֆրան-
սիայում։ Փաստորեն միայն Կոմունայից հետո յե, որ
մինչ այդ գլխավորապես վաշխառուական կապիտալի յեր-
կիր Ֆրանսիան, որ մյուս յերկրներին դրամ էր փոխ
տալիս, սկսում է զարգացնել իր լեռնային արդյունա-
բերությունն ու մետաղի արդյունագործությունը։ Մինչ
այդ մեքենայական շարժիչների գործադրությունն այս-
տեղ համեմատաբար դանդաղ էր աճում։ Ֆրանսիական
արդյունագ-ծական տեխնիկայի մասին պարզ պատկե-
րացում ստանալու համար բավական է հիշել, որ 1871
թվին Ֆրանսիայում կար ընդամենը 26.146 շոգեմեքենա
316.000 ձիու ուժի կարողությամբ, մինչդեռ 40 տարի անց
կար 82.238 մեքենա 2.913.013 ձիու ուժի կարողու-
թյամբ։ Ուրիշ խոսքով ասած՝ արդյունաբերությունն այն
ժամանակ ոտկոտոր էր։

Պրոլետարիատը դեռ ևս նշանակելի չափերով արհեստա-
ների հետ կապված մասսա յեր։ Բանվոր դասակարգի
այդ կիսաարհեստավորական բնույթը նույն իսկ Փարի-
զում խիստ հստակ կերպով էր զգացվում Կոմունայի
որով։ Ցեվ յերկրի արտադրական ուժերի այդպիսի դրու-
թյունը չէր կարող չպայմանավորել պրոլետարիատի ան-
հաստատակամությունը։ Իսկ այդ անհաստատակամու-
թյունից բղխում էր նաև մնացածը։ Պրոլետարիատն, իր
սակավազորության պատճառով, դեռ ևս չէր կարող պրոլե-
տարական պետության կուռ կազմակերպություն ստեղծել։

Փողոցներում կատարված այն կոտորածը, որով գե-
ներալ Գալիֆեն պատկեց վերսայլցիների գործողություն-
ները Կոմունայի դեմ, իր չափերով ահռելի յեր։ Արյունը,
—գրում է Կոմունայի մասնակից Արնուն,—վտակներով
էր հոսում. Սենայի ջրերը կարմրեցին։ Սպանվածների
դիակներն ընկած եյին փողոցներում բազմահազար քա-
ռակուսի մետր տարածության վրա, մի քանի մարմնի
հաստությամբ. Վերսայլի թնդանոթների անիվներին ցեխ,
լերդացած արյուն և մարդկային ուղեղի կտորներ եյին
կպած։ Ցերկու շաբաթ անընդհատ կոտորում եյին՝ առանց
դատի ու դատարանի»։

Ցերը ամեն ինչ վերջացավ, մեծ քաղաքից պակասել
էր հարյուր հազար բանվոր՝ սպանված, 30 հազար՝ գերի
վերցրված և 40—45 հազար՝ տաժանակրության ուղար-
կված, համքյարություններ կային, որոնց անդամներից մոչ
մի հոգի կենդանի չէր մնացել։ Աշխատանքի նկատմամբ
իր իշխանությունը կորցնելու ուրվականից վախեցած
բուրժուազիան այսպես մաքրեց իր հաշիվը Կոմունայի
հերոսների, Փարիզի պրոլետարիատի հետ։

Բայց Կոմունայի դասերն անոգուտ չանցան։ Նրա
արած փորձից շատ բան սովորեցին բոլոր յերկրների
բանվորները, և 56 տարի տևող ուժեղ կուսակցության շրջա-

նից հետո, Կոմունայի գաղափարները մարմնավորվեցին Սորհրդային միության կարգերում յերկրագնդի մի վեցերորդական մասում։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ
Ա. Մասիսյան
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

16. Բ. Մելիքյան.—Ոիֆիլիս . . . . . » — 5 կ.
17. Բ. Կարապետյան.—Մալարիա . . . . . » — 5 կ.
18 — «Յերիք Ինտերնացիոնալ» ինտեգրիրովկա (սպառված) . . . » — 5 կ.
19. Գիրինիյ.—Ի՞նչ է արհեստակցական արտադրական միությունը . . . . . » — 30 կ.
20. Վիշնեվեցկի.—«Աշխատանքի հաշվանդամների ապահովագրումը» . . . » — 30 կ.
21. — «Գործարտեղիմների կուլտուրական-ժամանցային կանոնադրություն » — 5 կ.
22 Ակուժրների «Կարմիր անկյունների և ֆիզկուլտի խմբակների կանոնադրություն
23. Սենյուշկին.—Ակուսմբային աշխատանքի խնդիրները (մամուլի տակ է)
24. Տոմսկի.—Արհշարժման հերթական խնդիրները (մամուլի տակ է)

ՊԼԱԿԱՏՆԵՐ

1. «Բարգրացրու աշխատ. արտադրողականությունը» Գինը 15 կ.
2. «Վերաշինենք մեր յերկիրը» (5 գույն) » 15 »
3. «Կարդա միության վաստ անդամի մասին» » 15 »
4. «Սոցսպահովագրության մասին (4 գույն) » 15 »
5. Բատրակ, սիր Լենինին » 15 »
6. Ի՞նչ է պրոֆմիության անդամատոմսը » 15 »
7. Կառուցող բանվոր, հիշիր (կրկնակի) » 30 »

Դիմել՝ Յերևան, ՀՍՍՌ սենյակ № 14
Адрес: Эривань, С. П. С. Армении комн. № 14

ՀՀ Ազգային գրադարան
NL0202937

գրչ.

ԳԻՆՆ Է
35
ԿՈՊ.

Դիմել՝ Երևան ՀԱՄԽ սենյակ № 14
Адрес: Эривань, СПС Армении, комн. № 14